


ԹԱԴ. ԱՎԱԼԲԵԴՅԱՆ

142

# ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԳՐԱԿԱՆ-ՊԱՏՄԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ



ՏԵՐԵՎԱՆ 1934

891-99.092 Հովհաննես

Ա-78  
ՎԻ

13 APR 2011

ԹԱԴ. ԱՎԴԱԼԲԵԳՅԱՆ

## ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԳՐԱԿԱՆ-ՊԱՏՄԱԿԱՆ ՎԵՐԼՈՒՇՈՒԹՅՈՒՆ



62/26

8 Ե Ր Ե Կ Ա Ն 1 9 8 4

20 FEB 2013

20.085

ԽԱՆԱՀԱ



6804-56

ԲԱՆԱՍՔԵՂԾԻ

Թ Ա Ն Դ Յ Ա Ն Յ Յ Ո Թ Ա Ն Ա Մ Ա Մ Յ Ա Կ Ի

(1864—1934)

ՈՒ

Մ Ա Հ Վ Ա Ն Հ Ն Գ Ա Մ Յ Ա Կ Ի

(1929—1934)

Ա Ռ Թ Ի Ա Լ :

Պետական ապարան

Գումարի 495

Գատվել 1387

Տեղադր 300

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Ց Ե Ր Ա Ը
I Հայ գրականության յերեք պարբերաշրջանը	7
II Բանաստեղծի կյանքի ուրվագիծը	10
III Գրական գործունեյությունը	13
IV Ազգայնական գալանանքը	20
V Թախծերգի հանրային արժանանքը	22
VI Առանց ուսարակերության	24
VII Գիտությունների պտուտահորձանելում	28
VIII Սցիլլա ու Խարիբդա	32
IX Կայծերի թեորիան ու պատմագրական դեմոկրատիզմը	36
X Գյուղը Փրկարայր	42
XI Հողի վշտի մենանվագը	47
XII Սիրերգի առարկան բաղմենուի	49
XIII Ազգասեր գրուեին կանացի իդեալ	52
XIV Սոցիալական հակամարտություններին ի տև	55
XV Խեղիսափերության լումպեն-դրոշով	58
XVI Կովի փոխարեն՝ սերը համադարման	60
XVII Հրու Խաչեցյալից դեպի ըմբոստ Շդրայվածը	62



В темнице выросло дитя,—  
Ему ли петь о блеске дня,  
О шуме волн, просторе поля?...  
Бледна, убога песнь моя,  
Как ты, моя слепая доля!...

С. ФРУГ.

I

Հայոց գրականությունը զարդացման յերեք պար-  
բերաշրջան ե ունեցել:

Ամբողջ միջնադարում ու նորադարի առաջին հա-  
րյուրամյակներում մեր գրականությունը յեղել ե աշ-  
խարհիկ ու հոգեսր կալվածատեր ազնվականության  
գրականություն:

19-րդ դարի վերջերին ու 20-րդ դարի սկիզբներին  
ծագումն ե առնում հայ բանվորական գրականությու-  
նը՝ մեջտեղ հանելով յուր մամուլը, հրապարակախո-  
սությունը, վիպական գրվածքներն ու բանաստեղծու-  
թյունները, գրականագիտությունն ու պատմական ու-  
սումնասիրությունները:

19-րդ դարը հայ «Յ-րդ դասի» գրականության վոս-  
կեղարն ե, յերբ հանդես են գալիս նրա մեծագույն  
իդեոլոգները, վորոնց կարապետներին մենք հանդի-  
պում ենք գեռես 17 ու 18 դարերում\*): 17-րդ դարում

\*.) Հասկանալի յէ, վոր Հայաստանում ինչպես առևտուրն  
ու առևտրական կապիտալն իրեն մասնակի յերեւյթ, այնպես  
ե նրանց մասնակի ազգեցությունը գրականության վրա՝ յե-  
ղել են չատ հնուց։ Դեռևս վաղ միջնադարում Ազաթանգեղո-  
սի առաջարանի ջատագովում եր պերճանքի իրերի առևտուրը։

գրականության մեջ վոտք ե դնում անդրանիկ հայ մատենագիրը բուրժուական շրջանից —Զաքարիա Ագուլեցին յուր մեծարժեք «Որպագրությամբ»: 18-րդ դարում, յերբ հայ բուրժուագիան մելիքների ու կաթողիկոսների կողքին առաջին անգամ զնում ե յուր նշանավոր քաղաքական գործիչներին, հորիզոնում նաև իրքեւ հեղինակ յերեսում են Պետրոս Գիլանենցն ու ապա Հովհեփեմինը: Վերջապես նույն դարումն ե, վոր յերկու մեծ գործիչներ հնդկահայ գպրության հիմքը զնելով՝ բաց են անում հայ գրականության մի փայտուն եջ Փրանսական մեծ հեղափոխությունից ել առաջ՝ հայ բուրժուագիայի անդրանիկ խոշոր թեորետիկները հանդիսանալով:

18-ըդ դարի այս զույգ գործիչներից մեկը Շահաբիր Շահամիքիրյանն է, «Վորովայթ Փառացի» ու «Նշագակի» նորահայտ հեղինակը, իսկ յուսը Մովսես Բագրամյանը, վորի գրչին եպատկանում «Հորդորակը»:

Այս վերջին աշխատությունը, վոր լույս է տեսել  
Հնդկաստանի Մադրաս քաղաքում 1772 թվականին,

Ուշ միջնադարում Գրիգոր Տաթևացին բնահակառակը խարապո-  
նում եր առետարն ու վաճառականին՝ կրպակ կամ կղզակ  
բառն ստուգաբաննելով իբրև «գողի բակ»։ Մինչև անգամ բուր-  
ժուա բառի մուտքը հայերենի մեջ յեղել է ավելի քան 500—600  
տարի առաջ։ Այս բառը «բուրձէս» ու «պուրձէս» ձևերով գործ  
է ածվել կիլիկիահայ վրականության մեջ («Թէ բուրձէս լիի մեր  
կամ թէ բնակիչ երկրիս»). Լեռն Դ-ի 1330 թ. նոյեմբերի 24-ի  
պարզեագլիքը Սիկիլիայի վաճառականներին. տես Ալիշան  
«Սիսուան», Վենետիկ, 1885, եջ 364ա։ «Փառաւոր խոճանոյդ  
և պունէսնոյդ, իմաստուն վաճառականացդ»։ 1390 թ. «Պու-  
տոսի 18-ի կոնդակ, Կիլիկիայից ուղարկված լէհանայերին. Ալի-  
շան «Կամենից, Վենետիկ, 1896, եջ 9։ Հ. Աճառյանի հոյակապ  
«Արքատական բառարանը», Ե. Հատոր, եջ 1137, ունի այս բառի  
«պուրձէս» փոփոխակը)։ Խիստ նշանակալից ե, փոք բուրժուա  
բառի կողքին կամմունա բառն ել գեռ կիլիկյան շրջանում և  
մտել մեր գրականություն մեջ։ («Եւ թէ ձընումել մեանի ան-

վոչ միայն կարեսը պատմագրական մատյան եւ ու ազատագրական յերկ, այլև անդրանիկ նմուշն եւ Հայ բուրժուական ազգայնական Հանրային-քաղաքական պոեզիա:

ի՞նչ եր քարոզում «Հորդորակը»—հայ նորածող «Յ-րդ դասի» այս «Խարտիան»:

— Միջնադարյան տոհմի տեղ՝ նորագարի ազգայ-  
նություն, ազնվական պառակտումների տեղ՝ բուր-  
ժուական միաձուլություն, ասիական անշարժության վո-  
խարեն՝ յեվրոպական վերածնություն, անդեկ արտա-  
զաղթի փոխարեն՝ կազմակերպված վերադարձ, անո-  
րեն ինքնակալության տապալմամբ որինակարգ սահ-  
մանադրություն ու նկուն աղոթքի կողքին՝ ըմբուռ  
ուղագմերգ:

Ընդհանուր գծերով հենց այս գաղափարներն ել կազմել են հայ ազգայնական գրականության ու պոեզիայի բովանդակությունը։ «Հորդորակից» են ընձյուղում հայոց նոր գրականության ազգայնական յերկերը ֆրանսական մեծ հեղափոխությունից սկսած մինչև վերջին համաշխարհային պատերազմը։

Նույն այս հոսանքի ներկայացուցիչ է մեր նոր

սիթթիկ, նայ մեր գործաւորքն յիր իրքն ձեռնամուխ ըլինին, ապայ զիրքն գումինն առնու և այնէ, զինչ սահմանն է»։ Լեռն թ-ի 1288 թ. գեկտեմբերի 23-ի պարզեագիրը Զենովյայի վաճառականներին. Ալիշան «Սիսուան», 388ա։ Ալիշանը 387ա էջի յերկրորդ ծանոթագրությամբ արգեն բացատրել է, թե գումինն նշանակում է «Հասարակություն, Ըստու»։ Սեսականուրականը նույն վայերագրում միշտ լինում է «Գումինին»։ «Պարզեցաք աստուծահաստատ գումինին ձնուվիզացն», «աստուծայսահ գումինին ձնուվիզացն», «վառնայ ի գումինին ձեռք»։ Լեռն թ-ի սիկիլիացիներին տված վերոհիշյալ պարզեագրում պահպած է այս բառի մի ուրիշ փոփոխակ. «Աւտար նաւ կամ թե աւտար գէմնի մարդ կամ ըռզակ չառնուն հետ իրեանցն, որպես Սիծիլիան խլբան»։ Ալիշան «Սիսուան» 364ա։ Աւանդայնի «Արժատականը» չունի «Գումին» բառը։)

գրականության մեջ բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսայանն ել: Հայ Յ-րդ դասի պոեզիայի նույն դարավոր բնից արձակված շիվեր են նաև նրա «Բանաստեղծությունները»:

## II

Հովհաննես Հովհաննիսայանը ծնվել է Վաղարշապատ ավանում 1864 թվականի մայիսի 8-ին (հին տոմարով ապրիլի 26-ին):

Ծագումով կյուղացի եր, մինական ընտանիքի զավակ: Հորական պապը կյուղական արհեստավոր եր, վարչական ասում ելին գերձիկ Վարդան: Հայրը, բնիկ վանդան ասում ելին գերձիկ Վարդան: Հայրը, բնիկ վաղարշապատցի, Մկրտիչ Վարդանյան Հովհաննիսայանը, յերկրագործ եր, գրագետ: Մայրը, վաղարշապատցի Անուշկա Տեր-Մեսրոպյանը, տնտեսուհի եր, վանդրագետ: Հորեղբայրը, Հովհաննես անունով, վոչ անդրագետ եր, այլև վոտանավորներ եր Հորինում: միայն գրագետ եր, այլև վոտանավորներ եր Հորինում: Վաղամեռ այս յերիտասարդի անունով եր, վոր ծնող-աները կոչեցին իրենց անդրանիկին—նորածին բանատեղին:

Հովհաննիսայանը գրաճանաչությունը սովորել է Հորից: Վեց տարեկան մտնելով Վաղարշապատի ծխական ուսումնարանը՝ սկզբնական ուսումն առնում է կան ուսումնարանը՝ սկզբնական ուսումն առնում է այստեղ: Մի տարի ել կարդում է Գայիքանեցի նորաբաց այստեղ: Մի տարի ել կարդում է Գայիքանեցի նորաբաց այստեղ, վորի դասասու վարիչն եր գիտնական Վաղարշոցում, վորի դասասու վարիչն եր գիտնական Վահան Բաստամյանը—Միիթար Գոշի «Պատաստնաւահան բաստամյանը—Միիթար Գոշի «Պատաստնաւահան բաստամյանը—Միիթար Գոշի» ուսումնասիրողն ու Հրատարակիչը: Այսուհետեւ դրբի» ուսումնասիրողն ու Հրատարակիչը: Այսուհետեւ Հովհաննեսին տալիս են Յերևանի պետական պրոլիտ նազիան, վորտեղ սովորում է մինչև 1877 թվականի սեպտեմբերի վերջերը:

Վորդու ուսման հետագա ծախսերը հոգայու Հնարայի որություն չունենալով՝ Հայրը դիմում է Մոսկվա, Լազարյան Ճեմարանի վարչությանը և Հաջողեցնում է ողաքային ընդունել տալ գիշերոթիկ աշակերտի թեկնածու: Մի առ ժամանակ հետո լուր է ստացվում, վոր

յերեխային ու վարդեն Մոսկվա՝ Լազարյանում ուսումը շարունակելու:

Հովհաննիսայանը տասներեք տարեկան եր, յերբ կատարվեց նրա ապագայի համար վճռական նշանակություն ունեցող այս տեղափոխությունը: 1877 թվականի աշնանը նա համում է Մոսկվա և ընդունվում Ճեմարանի Յ-րդ դասարանը: Հաջողությամբ հետեւելով գասրին-թացներին՝ 1883 թվականին ավարտում է Լազարյան Ճեմարանը՝ ցույց տված առաջադիմության համար ստանալով արծաթյա մեղալ: Նույն տարվա ոգոստոսին մտնում է Մոսկվայի համալսարանը՝ մասնագիտություն ընտրելով պատմա-բանասիրական ճյուղը: Այսուղեղ ել հենց վերջացնում է համալսարանական կրթությունը 1888 թվականին և ստանում համապատասխան վկայական, վորի տակ պատմաբանասիրական Փակուտեատի գեկանի փոխարեն ստորագրել է ուսուաց հոչակավոր պատմաբան Վասիլի Կլյուչևսկին:

Տասնումեկ տարի յե մնում Հովհաննիսայանը Մոսկվայում և այս ժամանակամիջոցում լիովին կազմակերպ վում է իրեն անձնավորություն ու հեղինակ: Նա Մոսկվա մտնում է, վորպես մի սովորական գյուղացի տղա, իսկ յերբ 1888 թվականին, 24 տարեկան հասակում, թողնում եր մայրաքաղաքը, նա այնտեղից դուրս եր գալիս իրեն հայ գրականության մեջ արդեն հոչակաված ու մեծ հույսեր ամփող բանաստեղծ, լեզվագիտական ու մանավանդ գրականագիտական այնպիսի կրթությամբ ու պաշարով, վոր քչերն են ունեցել հայ արվեստագործներից:

1888 թվականից սկսվում է բանաստեղծի կյանքի մի նոր շրջան: Այս տարվա աշնանը հրավիրվում է յուր ծննդավայրը, Վաղարշապատ, Գեղորգյան ճեմարանի ուսուցիչ: Այսուղեղ ել մնում է մինչև 1912 թվականի ամառը: Քառորդ գար տեսող այս շրջանում միմիայն կարծ ժամանակամ 2 անգամ (1891—4 ու 1900—1 թ.) փոխադրվում է Թիֆլիս ուսուցչի ու տեսչի պաշտոնով,

բայց չուսով ելի վերադառնում է Վաղարշապատ՝ դաստիանդելը շարունակելու գեորգյան ճեմարանում։ Այս տարիներում հիշատակելի կենսադրական դեպքն այն է, վոր բանաստեղծը 1889 թվականի ամռանը Յեղողաց անցնում շրջագայելու՝ այցելելով Փարիզի մթջաղ-գային ցուցահանդեսն ել։

Վաղարշապատում բանաստեղծը մեծ հասակում ապրել է մոտ 25 տարի (հիշյալ ժամանակաշրջանում 22 տարի ու յերեք տարի յել հետո, 1919—1922 թվականներին)։ Այս քառորդ դարը բոլորովին ուրիշ ազգեցություն է ունեցել նրա տաղանդի զարգացման վրա։ Հետ ընկած ավանի դորշ կյանքը նպաստավոր պայմաններ չուներ այնպիսի կակուղ կամքի, հեղ բնավորության ու բանաստեղծական մեղմ խառնվածքի համար, վորպիսին ուներ Հովհաննիսյանը։ Եջմիսնի արեղայտկան տաղուուկ մթնոլորտը և Վաղարշապատի մանրիկուրժութուական ու մանրիկ-չինովնիկական տափակ միջավայրը մի կատարյալ թաղթաղուկ եր, վորն աննկատելի կերպով դեպի յուր խորքերն եր քաշում մի փայլուն տաղանդ։ Խաչատուր Արովյանին փրկեց վոչ միայն Դորպատը, այլև այն, վոր Եջմիածինը ձեռքերը թափահարելով հրաժարվում եր նրանից և հեռու վանում նրան։ Հովհաննիսյանն այս կողմից ավելի անրախտ դուրս յեկավ։ Նրան մարդ ու բանաստեղծ դարձրեց Մոսկվան, բայց նրա տաղանդի ու աշխարհայացքի զարգացումը վտանգվեց չնորհիվ այն հանգամանքի, վոր Եջմիածինը յուր կրծքին շատ պինդ եր սեղմում պոետին։ Բանաստեղծի ծննդավայրի հասարակական մթնոլորտը նրա գրական վայրեջքի պատճառը յեղավ։ Հայոց գրականության պատմության տիրալի Եջերից մեկն ել այն և հիշվելու անշուշտ, վորտեղ պատմվելու յե, թե ինչպես հայ աշխարհաբառ պոեզիայի ալախոսիկ վարպետը Եջմիածնի սինողի ատենադպիրը դարձած՝ տարիներ շարունակ յուր որերը մթնացնում եր կղերանոցի սքեմա-վորների հետ վանական նիստերին մասնակցելով կամ թի-

20-րդ դարում հաս ու չհասի մասին գրարառ արձանագրություններ կազմելով։

1912 թվականի ամռանը Հովհաննիսյանը քաղաքացին ուսումնարանական հանձնաժողովի նախագահի պաշտոնով փոխադրվում է Բագու, վորտեղ մնում և չինչել 1918 թվականը։ Այն տարվա մայիսին քաղաքական հայտնի իրադարձությունների հետևանքով անցնում է Հյուսիսային Կովկաս, վորտեղ մնալով մեկ տարի՝ 1919 թվականին վերադառնում է յուր հայրենի գյուղը՝ այստեղ հայկական միջնակարգ զպրոցի վարչի պաշտոն ստանձնելով։ 1922 թվականին վերջնականապես թողնում է ծննդավայրը և փոխադրվում Յերևան, վորտեղ ապրում է նախ իրեն պաշտոնյա, ապա իրը վաստակավոր թոշակառու։

Նրա «ծառայության ցուցակը» ձոխացած եր արդեն յերեսնամյա մանկավարժական, ավելի քան քառասումյա հասարակական ու մանավանդ հիմնումյա դրական գործունեյության անցյալով։

Այստեղ, հանրապետության մայրաքաղաքում, բանաստեղծը վաթսուն հինգ տարին լրացրած հասակում վախճանվում է 1929 թվականի սեպտեմբերի 29-ին, յերեկոյան ժամը 5-ի մոտերքը՝ հանկարծամահ լինելով։ Հուղարկավորությունը լինում է Հոկտեմբերի 2-ին։ Թաղվում է Յերևան քաղաքի «Մելիք» կոչված գերեզմանոցում։

### III

Հովհաննիսյանը գրական գործունեյությունը «յուրամար» սկսել է աշակերտական նստարանից, Լազարյան ձեմարանում։ Այստեղ այն ժամանակ դասատու եր բանաստեղծ Սմբատ Շահազիլյանը, վորը հենց սկզբից մեծավես ազդել է յուր սանի վրա։

Հովհաննիսյանի զպրոցական տետրակները, կորոնք պահպում են Յերևանի պետական թանգարանում,

շույց են տալիս, վոր նա վոտանավորներ սկսել ե գրել  
դեռևս 1879 թվականին, յերբ 15 տարեկան եր, 4-րդ  
դասարանում:

Թվագրված վոտանավորների շարքում ամենավաղ  
գրվածը ֆրանսացի բանաստեղծ Արնոյի «Տերեվ» բա-  
նաստեղծության թարգմանությունն ե, վորի տակ նըշ-  
ված ե «1879, ապրիլ»\*): Նույն տարում սրան հետեւուժ  
են ուրիշ, ինքնուրույն ու թարգմանական վոտանավոր-  
ներ, վորոնցից մինչև հիմտ վոչ մեկը չի հրատարակ-  
ված:

Պատանի բանաստեղծի գրականուակես «բոյ քաշելն»  
ապշելի յե առաջին տարիներում: 1879 թվականին նրա  
գրածները կատարելապես աշակերտական փորձեր են:  
մեկ տարվա ընթացքում նա այնպես ե հասունանում,  
վոր 1880 թվականին 16 տարեկան պատանու գրչի տա-  
կեց յելում ե «Տեսել» ես արդյոք այն բլուրները» բա-  
նաստեղծությունը, վոր արդեն վարպետի գործ ե ար-  
դեստի տեսակետից:

Բանաստեղծն առաջին անգամ գրական հրատարակ  
ե յելում 1883 թվականին\*\*), յերբ Տիգրան Նազարյա-  
նի «Աղբյուր» մանկական ամսագրում նույն թվականի  
ապրիլի համարի մեջ տպագրված լույս ե տեսնում նրա  
մի ինքնուրույն վոտանավորը («Զինջ յերկնքից մոսկի

\*) Արնոյի այս վոտանավորը մեր գրականության մեջ  
հայտնի յե Ռաֆայել Պատկանյանի թարգմանությամբ՝ ու  
«Վոստիկ» վերնագրով:

\*\*) Գրականության մեջ տարածված ե մի տեղեկություն,  
թե բանաստեղծը գրական հրատարակ ե յելել 1882 թվականին,  
յերբ իր լույս ե տեսել Գյոթեյի «Զինորսի» նրա թարգմա-  
նությունն Եջմիածնի «Արարատում»: Բայց այս տեղեկությու-  
նը, գորի հիման վրա յել հենց հաշվում եյին, թե բանաստեղծի  
գրական գործունեյության 30-ամյակը լրացել եր 1912 թվա-  
կանին, սիսակ ե: Մեր ստուգումը պարզեց, վոր «Զինորսը»  
տպված ե «Արարատում» վոչ թե 1882 թվականին, այլ այս հան-  
գեսի 1884 թվականի մարտի 31-ի գրքում:

արե, Տալիս ե մեզ սիրո բարե» և այլն\*): Այս միջո-  
ցին բանաստեղծն ուղիղ 19 տարեկան եր:

Լազարյան ճեմարանի բարձր դասարաններում Հով-  
հաննիսյանն աշխատակցում եր զարգոցական «Հույս»  
թերթին՝ միաժամանակ անդուռ տքնելով յուր գրար-  
վեստը կատարելագործելու վրա: Այս շրջանի գործե-  
րից գրական արժեքը ունեն հատկապես նրա թարգմա-  
նությունները:

Ամկայն Հովհաննիսյանի պոետական մեղքամիսը  
կազմում ե նրա կյանքի այն շրջանը, յերբ նա համալ-  
սարանի ուսանող ե. 1884 թվականի գարնանից մինչև  
1888 թվականի ամառը, յերբ նա ավարտում ե համալ-  
սարանը, հորդ ու անընդհատ խփում ե նրա բանաստեղ-  
ծությունների վճիռ շատրվանը՝ մատաղահաս տաղան-  
դի արեի տակ շողշողալով ծիածանի բոլոր գույններով:  
Չափազանցություն չի լինի, յեթե ասենք, վոր բանաս-  
տեղծն այս շրջանումն ե զրել յուր մինչև հիմտ տպա-  
գրված բոլոր վոտանավորների գրեթե 50 տոկոսը, վոր  
յեթե զնենք գեղարվեստական զնահատության կշռ  
մեկ թաթը, թերեւ կարող ե քաշել, բարձրացնել մնա-  
ցածը պարունակող մյուս թաթը:

Այս միջոցին բանաստեղծը մասնակցում եր Մոսկ-  
վայի հայ ուսանողների գրական ընկերության գործու-  
նեյությանը: Ուսանողական այս խումբը կազմակեր-  
պում եր հայվաքույթներ, վորտեղ զեկուցումներ եյին  
կարգացվում հայ ուսանողների ու ինտելիգենցիայի  
համար, մասնակցում եր հասարակական գործերին և  
մատչելի հրատարակություններ եր անում: Խմբի՝ բա-  
նաստեղծից ծածուկ հավաքած միջոցներով ե ահա, վոր  
1887 թվականին իրեւ հիշյալ սերիայի № 5 հրատարա-  
կություն լույս ե տեսնում Հովհաննիսյանի «Բանաս-  
տեղծությունների» անդրանիկ գրքույկը, Մոսկվայում:

Գրքույկը թողնում ե մեծ տպագորություն: Արեե-

\*) Հմմատ. նաև «Աղբյուր», 1913 թ. ապրիլ:

լահայ, նույնիքակ արևմտահայ մամուլը վկայում է, վոր փոտանավորների այս փոքրիկ տետրով հայ գրականության ասպարեզը վոտք ե ե դնում մի անվիճելի տաղանդ, վոր փայլուն ապագա յե խոստանում: Հասարակությունն, ել յուր կողմից ե ջերմ ընդունելություն ցույց տալիս: Յեվ այս թվականից Հովհաննիսյանի համար միանդամ ընդմիշտ ապահովվում ե քնարերգակ պոետի ու վոճարան հեղինակի անունը:

Հովհաննիսյանը շարունակում ե յուր գրական գործունեյությունը՝ բանաստեղծություններ տպագրելով զանազան հրատարակությունների մեջ:


Շուտով նրա բանաստեղծություններից «Փայոր», «Ամերակը», «Գյուղի ժամը», «Հատիկը», «Արտավազդը», «Սյունյաց իշխանը», «Աշողը» և այլն, թարգմանություններից «Յոլուն աստղերը», «Փերի արագիլը», «Անդրագետը», «Յերգչի անեծքն» ու մյուսները մտնում են զանազարքերի մեջ, հեղեղում ուսումնաբանները և կամ արտասանվում հանդեսներում, իսկ տաղերը, «Ախ, տվեք ինձ քաղցր մի քուն», «Ալագյազ բարձր սարին», «Մրազն յեկավ լափին տալով», «Լուս կաց, սիրտ իմ», «Նոր գարուն» յեղանակվում և յերգվում են՝ լայնորեն տարածվելով ժողովրդական մասսաների մեջ ել\*): Այսպիսով Հովհաննիսյանը բառացի իմաստով դառնում է դասական հեղինակ ու ժողովրդական բանաստեղծ:

\*.) Մրանցից «Ալագն եկավ»-ն այնքան ե ժողովրդականանում և մերկում մեր անդիր բանահյուսության հետ, վոր հետագայում լրադրության մեջ մինչև անդամ մի կուրյողային վեճ և ծագում այն մասին, թե ո՞վ ե յերգի հեղինակը—պոետի ժողովուրդը, թե ժողովրդական պոետը: Տեսեք Պ. Մակինցյանի «Գրական մանրունքներ» («Մշակ» լրագիր, Թիֆլիս, 1914, ապրիլի 23, № 87), Գ. Լեվոնյանի «Գրական առութաներ» («Մշակ» 1914, ապրիլի 29, № 92) ու իրեն՝ բանաստեղծի հոգվածը — Հ. Հովհաննիսյան «Մի լուսաբանության շուրջը» («Մշակ», 1914, մայիսի 10, № 100):

Ուսուցչական գործունեյության յերեսնամյա շրջանը միատեսակ չի ազդել Հովհաննիսյանի բեղմնավորության վրա: Յեթե ընդունենք, վոր այս ամբողջ շրջանում նա արտադրել ե այնքան, վորքան գրել եր ուսանողության 5 տարում, ապա համեմատելով կտեսնենք, վոր վարժապետության առաջին տասնամյակում նա ստեղծագործում է նախկինի կիսի չափ, իսկ մեացած յերկու տասնամյակից ամեն մեկում ուսանողական շրջանի հազիվ քառորդի չափ:

1908 թվականին, առաջին գրքույի տպագրությունից մոտ 20 տարի անց, Բագվի Հայոց կուլտուրական Միության միջոցներով լույս ե տեսնում նրա «Բանաստեղծությունների» նոր ու ճոխացրած հրատարակությունը: Այս թվականից մամուլի մեջ սկսվում է աստիճանաբար զարեղացող կամպանիա Հովհաննիսյանի ոգտին: Զանազան կողմերից ձայներ են խվում նրա հորելյանը տոնելու մասին: 1912 թվականին Վաղարշապատի հոբելյանական հանձնաժողովը մի փոքրիկ գրքույկով լույս ե ընծայում նրա «Բանաստեղծությունների» ժողովրդական հրատարակությունը: Նույն թվականից տարբեր վայրերում սկսում են կատարել բանաստեղծի պատվին հոբելյանական հանդեսներ: Վերջապես 1913 թվականին մայիսի 10-ին (հին տոմարով՝ ապրիլի 27-ին) Բագվում, բանաստեղծի պաշտոնավայրում, հայ ու հարևան ազգությունների ներկայացուցիչների մասնակցությամբ հանդիսավորացներական տոնվում է նրա հոբելյանը: Վերջապես 1913 թվականին մայիսի 10-ին (հին տոմարով՝ ապրիլի 27-ին) Բագվում, բանաստեղծի պաշտոնավայրում, հայ ու հարևան ազգությունների ներկայացուցիչների մասնակցությամբ հանդիսավորացներական տոնվում է նրա գրական գործունեյության յերեսնամյա հոբելյանը:

\*.) Առում ենք «զրեթե», վորովհետեւ, ինչպես հիմա յեպարդիում, ամենատարածված երգասահայ լրագիրը—Թիֆլիսի «Հարիղոնը», վոր այնպիսի շնորհով տոնել եր այն ժամանակ իրեն ու յուր թարգմանի պիզ ճկած յերկու հայ հեղինակի հոբելյանները, բայց բարձր բոյկոտել եր հոբելյանը Հովհաննիսյանի, վորը նորայի պարագան հակառակորդն եր



քեն մամուլի որդաններ Կովկասում ու Մոսկվայում ար-  
ձականում են հորելանին՝ հայաստելով բանաստեղ-  
ծի դերն ու գործի արժանիքները:

Գրականության ու մամուլի մեջ Հովհաննիսյանի  
առեղիքայի նկատմամբ յեղած ուշադրությունն ու հար-  
ցասիրությունն ավելանում եյին հետզհետե, յերբ  
պայթեց համաշխարհային պատերազմը յուր ահռելի  
հետեանքներով, վորոնց ժամանակ մոռացվեցին կուլ-  
տուրական ու գրական շահագրգռություններն առհա-  
սարակ:

Համաշխարհային պատերազմից հետո, յուր գրա-  
կան գործունեյության 5-րդ, վերջին, տասնամյակում  
Հովհաննիսյանը շատ քիչ բան և արտադրել: Այս տաս-  
նամյակը գրական արդասալորության կողմից չի կա-  
րող համեմատվել մինչև տնօտամ նրա ստեղծագործու-  
թյան տոտջին հնդամյակի հետ (1880—1884):

Համարվում: Թիֆլիսի հայ գրորդներից մեկն այս մասին մեր  
արած հարցումին պատուիսանելով զբում ե մեզ 1930 թվականի  
հունիսի 29-ի նամակով:

«Հովհաննիսյանի մասին յես գրել եյի մի  
բարգական ընդարձակ հոգված, վորը պիտի տպիեր «Հորիսո-  
նում»: Հովհածը շարվեց, սրբազրության թերթը յես առացա  
և սրբազրելով ուղում եյի տպարան ուղարկել, հանկարծ կար-  
գագրվեց «առայժմ հոգվածը շտպագրել, մինչև խմբագրական  
կողեգիտայի նիստը»: Հովհածը 2—3 շաբաթ այդպես մնաց, և  
ապա վորոշումն ինձ հայոնեցին — «Հովհաննիսյանի հորեւ-  
յանին չարձագանդել»: Հետեանքն այն յեղալ, վոր հոգվածը  
կորագ, ձեռագիրն ել մնաց տպարանում: Այս խնդրում դժբախ-  
տարար մեծ դեր խաղաց մեր հայոնի գրողներից մեկը»:

Յեղ այսպես, история правду видит, да не скоро скажет... Ափառո՞ս, նամակագիրը խորհրդագոր կերպով լուսվ ե  
ոյն մասին, թե ով եր մեր հայոնի գրողներից այն մեկը, վոր  
այն ժամանակ Դեղ Մրուսի դեր եր կատարում «Հորիսոնի»  
պահնորդական բաժանմունքում...

Պոետը չունեցավ յուր յեթե վոչ բոլոր յերկերի  
կամ բոլոր տպագրված գործերի, գոնե լույս տեսած բո-  
լոր բանաստեղծությունների լիակատար ժողովածուն  
տեսնելու խնդրությունը: Մինչև հիմա չի կազմված նրա  
տպագիր յերկերի բիրլիոգրաֆիան: Զի կրված նրա  
կենսագրությունն ել:

Թեև դեռ մանրամասն հայտնի չի նրա միջավայրի,  
կենցաղի, մտքի ու սրտի պահամությունը, բայց և այն-  
պես մեզ անվիճելի յէ թվում, վոր բանաստեղծի վեր-  
ջին տասնամյակների անհատական յերգերի մեծ մասի  
տիբրությունն արտահայտություն է նաև այն հանգա-  
մանքի, վոր նա գիտակցում եր, թե յուր պոեղիքայի  
վայրուակ ընթացքի պատճառը յուր կյանքի անհրա-  
պույր, զորչ ու դաժան պայմաններն են:

Հնաղարի մեծ զիտնականներից մեկը — Արխիմե-  
դեսն ասում եր. «Ճվեք ինձ մի հենակետ ու մի լծակ,  
և յես կրածրացնեմ յերկրագունդը»: Հենակետը մար-  
դիս ընդունակությունն է, լծակը՝ պայմանները: Պայ-  
մանները բախտավորների համար լծակ են, անբախտ-  
ների համար՝ լուծ: Անհատների կյանքում պատահում  
ե այսպես ել, վոր պայմանները յերբեմն լծակ են լի-  
նում, յերբեմն ել լուծ:

Հովհաննիսյանի համար կյանքի պայմանները հե-  
տամնաց նահապետական ավանից մինչև միջազգային  
խոշոր կենտրոններից մեկը — Վաղարշապատից մինչև  
Մոսկվա — լծակ եյին, իսկ մայրաքաղաքի լայնաշունչ  
համալսարանից ու բանաստեղծի պայծառ աշխատանու-  
ցից մինչև մայրավանքի անող սինողն ու չինովնիկի  
նսեմ պաշտոնախուցը՝ լուծ:

Հենակետը կար, լծակն եր լծանում, ծանրանում...

Որեցոր հարվում մեղրամոմի պես,  
Հատնում են ույժերս, և խիստ, և ավյուն,  
Մանուկ իղձերիս կարուսում եմ յես,  
Ել բացվելու չե ինձ համար դարուն:

Յեվսիրտս, վորմիտավիդ երանուշ,  
Հնչում եր, վորպես կարկաչուն աղբյուր,  
Ախ, այսոր թեկբեկ՝ լարերը քնքուշ,  
Մահու դրոշով լոել ետխուր...

#### IV

Շատերի կողմից նշված ե, վոր Հովհաննիս յանի  
պոեզիայի հիմնական տոնը, հնչունը թախծային ե.  
Նա մեր գրականության մեջ առաջնակարգ թախծերգակ  
է ճանաչված: Սակայն նրա պոեզիայի սոցիոլոգիական  
ուսումնասիրության միջոցին բավական չի չեշտել նրա  
բանաստեղծությունների մինորային հնչումը, այլ ան-  
հրաժեշտ ե պարզել նրա թախծերգի արմատները, վո-  
րոնք գերազանցապես հասարակական են՝ նեղ անհատա-  
կան կյանքի պայմաններով բարդացած:

Վո՞րն ե այն կոլեկտիվը, վորի ապրումներին ար-  
ձագանգ ե տալիս բանաստեղծի թախծությանը:

Մեր մատնանշումը, թե Հովհաննիս յանը գաղափա-  
րապես պատկանում ե հասարակական այն հոսանքին,  
վորի ակունքը համնում ե մինչև Մովսես Բաղրամյանի  
«Հորդորակը», արդեն տալիս ե այս հարցման պատաս-  
խանը:

Ինքը բանաստեղծը շատ անգամ ե արտահայտել  
յուր վոտանավորներում, թե նրա հասարակական շա-  
հագրգության առարկան ամենից առաջ ազգությունն  
ե, հայրենիքը: Այսպես, գրական հենց առաջին քայլե-  
րի ժամանակ պոետը հայտարարում ե.

Յեվմնաք բարով, սե՞ր, համբո՞ւյր կուսի,  
Յեվմանուկ հրճվա՛նք մատաղ որերի,  
Յես հայրենյացս եմ միայն սիրահար,  
Նա ելոկ վշտի աղբյուր ինձ համար:

Նույնը կրկնում ե հաստատում ե բանաստեղծը տաս-  
նյակ տարիներ անց. յուր կյանքի վերջին շրջանում նա-  
դիմելով հայրենիքին՝ ասում ե՝

Յերազներիս մշտական  
Տիրուհին ես պաշտելի,  
Իմ այցելու գիշերվան  
Վշտի անհուն ժամերի:

Մի ուրիշ բանաստեղծության մեջ նա ներկայաց-  
նում է յուր հոգեհարազատներին, վորոնք այնպես հա-  
մապատասխան են իրար—մուսային, վոր փշյա պսակով  
և զարդարուն, ու հայրենիքը, վոր պիրկ շղթայակապ ե.

Յեվ հիմա մուսաս այսպիսի գիշեր  
Յերեսում ե ինձ փուշ պսակ գլխին,  
Յեվ յերգում յեմ յես քո կուռ շղթաներ,  
Մարուկ հայրենիք, իմ մայր տիրագիւն:

Սոցիալական համակրությունների նույն բեկոն է  
դեպ ինքը քաշում բանաստեղծի հոգին, յերբ նա ներ-  
կայի ծանր կացությունից հետո ուզում է յերգել յուր  
հասարակական-քաղաքական ակնկալությունն ու յե-  
րազանքն ել.

Յեվ հիմա միայն՝ անուշ, սիրելի  
Մի յերազ ունեմ, յերկիր պաշտելի,  
Վոր մեկ ել քնարս ձեռքս առնեյի  
Քո հարությունը տոնելու համար:

Պոետի դրոշն ակներև ե, վորոշ: Նա պատկանում է  
այն բանակին, վորին զինվորագրվել ելին նրա անմի-  
ջական նախորդներն Ալիշանից մինչև Գամառ-Քաթիպա  
ու Պեշիկթաշլյանից մինչև Սմբատ Շահաղիզյան:

Սակայն հասարակական-դասակարգային ի՞նչ նոր  
մտայնության ու տրամադրությունների արտահայտու-  
թյունն են պոետի յերգերը, ինչո՞վ ե բանաստեղծը տար-  
բերվում յուր նախորդներից, կամ վորոնք են այն նոր  
հատկանիշները, վորոնցով ոժաված ե նրա պոեղիան:

Հովհաննիսյանի հասարակական-քաղաքական պոետիան, վոր ձեւագորգել ե գլխավորապես տնցյալ զարդի մեջին տասնամյակներում, հայ հանրային բութուաւեկան, ազգայնական խավերի տրամադրության վայրեջքի արձագանքն ե:

Այս վայրեջքի սկզբնակետը 1878 թվականին Պրուսիայի մայրաքաղաքում գումարված միջազգային կոնգրեսն է Տաճկահայուսանին վերաբերող ունայն Յ1-րդ հոգվածով: Բեռլինի հաշությունը հայոց հարցի հուսախարող 10 թիվ Ե. Վ. Ա. Ռ. գարձավ կատարելապես: Նույնիսկ ծայրահեղ լավատեսներն ստիպված եյին խոստովանելու, թե տիրություն ու վհատություն եր նշմարվում «ազգի վրա», և թե ժողովուրդը հուսահատված եր\*): Բայց թե իրոք ինչպիսի լքում եր սուազը բերել յերրուական դիպլոմատիայի անտեսող արարքը հայկական անրջասեր շրջաններում, վորոնք այնքան սին հույսեր եյին դրել «քրիստոնյա» պետությունների «մարդասեր» քաղաքականության վրա Տաճկահայուսանին ինքնավարություն կամ ուժորմներ տալու հարցում, — ամենից պարզ ցույց են տալիս հետեւյալ տողերը, վորոնց մեջ մի նշանագոր հայ հեղինակ պատկերացնում ե յուր հոգեվիճակը Բեռլինի կոնգրեսից հետո:

«Ճատ տիրուր եյի այն որը... Արշավանքը Տաճկաստանի վրա թեև մեմամեծ ու ազնիվ խոստմունքներով եր սկսված, բայց փայ-բաժինը շատ անարդարությամբ եր կատարվում... Վոչ մի ավագակախումբ այնպիսի լրբանթյամբ իրա մեջ բաժանած չը կապուա կողոպուար, վորքան վոր այս նորատեսակ խաչակիրների վոհմակը բաժանում եր որ ցերեկով մող ու թրմուեկների ձայնով յուր կատարած հափշտակությունը: Իսկ տաճկահայերս, թշվառ հայերս, այդ միջոցին

\*) Հմմտ. Մինաս Զերապ «Բնէ շահեցանք Պետինի վեհաժողովեն», Կոստանդնուպոլիս, 1878, եջ 7 ու 24:

դռնե դուռ ընկած, այդ ավազակապետների ծառաներէ առջև ծունը դրած՝ մեր պապերու թողած ժառանգության ամենափոքրիկ մասն եյինք խնդրում և մեզ չեյին տալիս. Վոչ միայն չեյին տայիս, այլև ծիծաղում եյին մեր պարզամտության վրա... Ախ, շատ տխուր եյի այն որը... Ամենին, ամենին անիծում եյի այդ տիսուր որը, մինչեւ անգամ ծնած որս անիծում եյի:»\*)

Ցեվ այսպես գրում եր—գիտե՞ք ով—Ռափայել Պատկանյանը... նա, վոր գրոհի ըրջանի բանաստեղծն եր, Հբահրող ուզգմերգակը հայ պոեզիայում: Տեսնելով նաև ներքին ույժերի բացակայությունն ազգային ինքորինություն սուեղծելու գործում՝ նույնիսկ նա ընկածվել եր և սղում եր 1878 թվականին.

Վհատիչ մաքեր... բայց յես ի՞նչ անեմ, Զունիմ յես վոսկի, վոր յեզրարցս տամ, Ուզել ել չունեմ յես նոցա պաշտպանեմ... Եհ, կերթամ հետերն գեթ տրտմիմ ու լամ:

Ահա «տրտմելու և լալու» այս տրամադրությունների, նահանջի ապրումների արահայտիչը յեզակ Հովհաննիոյանի պոեզիան, վոր բազրոջի եր սկսում 80-ական թվականների վհատ մթնոլորտում:

Սրան անշուշտ մեծապես նպաստում եր նաև այն հանգամանքը, վոր նույն տարբիները նահանջի ու վհատության ժամանակաշրջան եյին ուստական հանրային կյանքում ել, մի կյանք, վորի ալիքներն աղղում, և տրամադրությունները համակում եյին նաև հայ առաջավար ինտելիգենցիային: Ռուսիայում Ռիսակովի սումբի վորոտից հետո հասարակական կյանքում թաղավորում եր մեռելային լությունը համատարած: Դրականության մեջ միալար սղում եր պոեզիան նաղ-

\*) Սյուլուկի (Ռ. Պատկանյանի) «Մեր տեղի ծակլարուները»: Տեսէք «Հացի կոտր. զելիթունցուն» ժողովածու Գ. Զալիսուցյանի խմբագրությամբ, նոր նախակիջևան, 1909, եջ 12—15:

սոնի, վոր հայրենի իրականությունը բնորոշում եր իրեւ «անթափանց գիշեր, վորը խավար ե ինչպես գերեզման»:

Հաջորդող 90-ական թվականների հասարակական քաղաքական անցքերը չբարձրացրին Հովհաննիսյանի տրամադրությունը: Մի կողմից՝ ցարական ռեժիմի խստացումն ու դաժանություններն ամբողջ պետության մեջ ու մասնավորապես Կովկասում, մյուս կողմից՝ սուլթանական վարչակարգի խժութություններն ու հայկական ահռելի կոտորածներն ոսմանյան կայսրության մեջ և հատկապես տաճկահայ վիլայեթներում՝ սոսկալի ազդեցին Հովհաննիսյանի քնարի վրա:

«Սգո որերը» ծնեցին սգո յերգեր, և պոետը վերջնականապես կաղապարվեց իրեւ թախծերգակ:

Գամառ Քաթիպայի պոեղիայի հակառակ, վորը սրա գոված բազեյի նման ճախրում եր վորսատենչ և ուղմի կարոտով ծղրտում.—

Յե՞րբ ապա սաստ, յե՞րբ սրի շաջուն,  
Փողի ձայներ, մարտի գոչյուն,—

Հովհաննիսյանի պոեղիան յուր յերգած արտուտի պես թվարտում և վիրավոր և հեծեծում սևսրտած.

Յես սեր կյերգեյի, բայց և ազնիվ մարտ,  
Այլ, ա՛խ, ցրտերից խամբեցավ գարուն,  
Թոշնեցավ սրտիս անուշ կոկոն վարդ,  
Կապված և լուռ՝ գտակ կարկաչուն:

## VI.

Պատկանյանի վոտանավորներից Հովհաննիսյանի բանաստեղծությունները զանազանվում են վոչ միայն վայրեցքի տրամադրությամբ ու թախծալի տոնով, այլ և մի կարեւոր կետում ել: Այս կետը պոետի վերաբերմունքն է դեպի ոտար ժողովուրդները, դեպի հարևան ազգությունները:

Հայ պոեղիայի պատմության մեջ ամենաթթու ստարատեցության ներկայացուցիչը Պատկանյանն ե: Յեթե վերցնենք սրա միմիայն գրական լեզվով հորինած բանաստեղծությունները, հարևան ժողովուրդների այսպիսի վորակումների կհանդիպենք:

Թուրքը հոտած ե, մոլի, անկրոն, մոլեկան, անսիրտ,

Հույնը՝ դարեւոր վոսոխ, կրօնամոլ, խարդախ,  
յեզդին՝ տավարի գող,

ոսմանլին կամ տաճիկը՝ կատղած, չար, տոփոտ,  
անգութ,

չերքեզը՝ հեն, այսինքն ավազակ,  
պարսիկը՝ հոտած, անկրոն, մոլեկան, վոխերիմ,  
գոռ, տոփոտ,

ոռուսը՝ նենդ, գայթակղիչ, բռնակալ,  
քուրդն՝ անգութ, անկշտում, չար,

վրացին՝ գիտ, սարկորեն շղթա կրող, գինեծան և  
ոտարն ընդհանրապես, վոր Հայաստումն ե ապ-

րում, ճպոստ, պլածած աչերով, տաելի:

Քամառ-Քաթիպան քիչ անգամ և զանազանում բըռնացող ազգի բռնակալին—սուլթանին, փաշային և այլն: Նրա անզուսպ զայրույթն ուղղված ե ազգերի դեմ: Նմուշի համար հիշենք նրա շովինիզբը ցուցադրող հայտնի քառյակը, վորտեղ սպառնում ե հարեւան ազգերի բոլոր վորդիներին անխտիր.

Նենդ ոռու, թուրք մոլի, պարսիկ վոխերիմ,  
Դարեւոր վոսոխ դու հույն կրօնամոլ,

Գիտցեք, վոր իմ սուր յերկայրի սրից  
Անվնաս չեր մնալ վոչ մի ձեր վորդին\*):

\*) Սմբատ Շահազդիզը, վոր ընդհանուր առմամբ զերծ և Պատկանյանի շովինիզմից, նույնպես ունի հատկածներ, վորտեղից արտափայլում ե նրա խղճուկ հայտցքը հարեւան ժիքանի ժողովուրդների մասին: Հմմտ. Կովկասյան լեռնականների վերաբերմամբ «Լեռնի վիշտը» Մասկվա, 1865, եջ 68, վրացիների վերաբերմամբ՝ նույնուեղ, եջ 80 ու մահմեղական ժողովուրդների վերաբերմամբ՝ նույնուեղ, եջ 114:

Հովհաննիսյանի բանաստեղծությունները միանդամայն ուրիշ վորակ ունեն այս կողմից:

Նրա վոտանագորներում ոտար ժողովրդի անուն չկա բոլորովին: Նրա յերգերը միանդամայն զերծ են նախորդ բանաստեղծների շոփինիզմից: Խոսքն ուղղերով Արագածին՝ պոեան իրավամբ ասում ե յուր մասին:

Քո ալեղարդ կատարին  
Աչքս ուղղած թախծալից՝  
Եւ չի տեսնում ոտարին  
Հոգուս աչքը թախծալից:

Հովհաննիսյանի նացիոնալիզմն անշուշտ չի նույնառում, բայց մի՛ քիչ մոտենում ե Միքայել Նալբանդյանի նացիոնալիզմին, վորը հայոց դատը պաշտպանելով՝ չեր տոգորիվում ոտարակերությամբ, այլ ուղղվելով նվաճողների պետական ռեժիմի բռնակալության դեմ՝ պահանջում եր «խոստովանել մյուս ուրիշ ազգությունը անխորդ նույնպիսի իրավանց ժառանդ», վորպիսին ստացել ե ինքը\*):

Վալերիյ Բրյուսովը «Պօջա Արմենի» ժողովածույթի ներածականում ճիշտ ե նկատում, թե «Պատկանյանի պոեզիայի նշանակությունը լիովին զնահատելը դժվար բան է այն ընթերցողի համար, վոր հայ չի»: Այս ճիշտ, բայց մեզմ ե տափած: Այս, Պատկանյանի մի շարք վոտանագորներն անհասկանալի յեն մի հեռավոր ոտարի համար, նրանք վոչ մի հույզ առաջ չեն բերի մի արարի, մի հնդիկի կամ մի չինացու մեջ, բայց այս դեռ ամբողջ չարիքը չի: Գամառ Քաթիպայի

\*) Թե վորքան արմատական հայացքներ ուներ Մ. Նալբանդյանն ազգության ու ազգային հարցի մասին ընդհանրապես, այս կարելի յե տեսնել մեր «Միքայել Նալբանդյան» աշխատության մեջ, Յեւհան, 1928, հջ 47—57:

վոտանագորների մեջ կան այնպիսիները, վորոնք, ձիշտ հենց այն քառյակի նման, վոր սպառնում ե ջնջել ոռուսի, թուրքի, հույնի ու պարսկի բոլոր վորդիներին անխորդ, միմիայն զայրույթ ու ատելություն կարող են առաջ բերել, յեթե թարգմանվելով մատչելի դառնան հարեան ազգերի ընթերցողներին:

Ուրիշ ե Հովհաննիսյանի քնարը՝ մասամբ հենց հանրային արամագությունների իջնող ընթացքի չորհիվ:

Վերելքն ու հարձակումը սաստկացնում են թշնամական վոգին ու զայրույթը հակառակ բանակի դեմ. վայրեջքն ու նահանջը հոգերանորեն ազդում են նոր ուղղությամբ. սկսվում ե մեղմանալ վոստիների նկատմամբ վոխը, և սաստկանում ե յուրայինների ձաղկումը: Նահանջողը հանդուրժամիտ ե դառնում և ինքնադատ:

Հովհաննիսյանի բանաստեղծությունների մեջ բոնությունը, հայածանքը, չարիքն անդեմ են ազգային յերանգի կողմից, մի տեսակ՝ պատմական տարերք. մինչեւ անդամ համաշխարհային պատերազմի արհամիքներին նվիրած մի բանաստեղծության մեջ նուկրեալ ազգային-հասարակական բանակներ չի տեսնում, այլ նկատում ե մի կույր ույժ-բախտը դարրին: Այսպիսի բմբոնման մեջ հեռավոր կերպով նշմարվում ե պատմական դետերմինիզմի աղոտ զաղափարը: Վորքան ել պատմագիտական կոնկրետացման տեսակետից այսպիսի բմբոնումն անբավարար լինի, բանաստեղծությունների ընդհանրական դառնայու կողմից այս անդեմ պատկերացումը նպաստավոր ե անպայման:

Այս հատկության շնորհիվ Հովհաննիսյանի պոեզիան, վոր յերգում ե յուր հայրենիքի վիշտն առանց այլատյաց շեշտերի, կարող ե սիրելի լինել ամեն մի ազգության ընթերցողի, վորի յերկիրը տնքում ե ուտար նվաճողի կամ սեփական բռնակալի կրնկի տակ: Նրա գրվածքները կարող են հուզել այնպես, ինչպես

Հուզում են Շեվչենկոյի, Ֆրուգի ու Նադսոնի լավագույն վոտանավորները։ Այս տեսակետից նրա այն բանաստեղծությունները, վորոնց մեջ լսելի յե «յերկրի մրմունջը», կարող են ազատագրական յերգեր դառնալ այն բոլոր ժողովուրդների համար, վորոնք թեև ընկճված են և տառապում են իմպերիալիզմի լծի ներքո, բայց վոգենրված են ազատագրության ու լավագույն ապագայի հույսով։

Թոշնեցան ծաղկունքն իմ անուշ յերկրի,  
Սառույցը կապեց արյունոտ վտակ,  
Ել պիտի ծաղկի<sup>օ</sup> կուրծքը սարերի,  
Արդյոք կտեսնեմ աղբյուրներն հստակ։  
  
Յերանի մեկ ել աչքս բանայի,  
Յեվ դու, իմ շեն տուն, այժմ գերեզման,  
Ավետարերիդ յես ընդունեյի,  
Լսեյի որհներգ քո վերածնության։

## VII

Հետաքրքրական ենակ վորոշել, թե քաղաքական որիենտացիայի հարցն ինչպես ե անդրադարձել Հովհաննիսյանի բանաստեղծությունների մեջ։

Նահանջի տրամադրությունն ազգել ենրա վրա նաև այս ուղղությամբ։

Նրա հասարակական-քաղաքական պոեզիան այս կողմից ել ավելի զգաստ ու իրատես ե դարձել։

Ինչպես հայտնի յե, արեվելահայ բանաստեղծության ու վիպագրության մեջ յեղել ե յերկու գլխավոր որիենտացիա—ոռուսասիրական ու ռուսացիաց (կամ յերոպասիրական)։

Ռուսական որիենտացիայի ճանաչված ներկայացուցիչը Խաչատուր Արովյանն ե, վորը գրում եր «Վերք Հայաստանու» մեջ։ «Որհնվի են սհաթը, վոր ոսի որհնած վոտը հայոց լիս աշխարհը մտավ և զլլրաշի անիծած չար չունչը մեր յերկրիցը հալածեց։ Քանի վոր մեր բերնումը շունչ կա, պետք ե գիշեր ցերեկ մեր քաշում

որերը մտքներս բերենք, ոռւսի յերեսը տեսնելիս յերեսներիս խաչ հանենք, աստծուն փառք տանք, վոր մեր աղոթքը լսեց, մեղ ռուս թագավորի աստվածահաստատ ձեռի տակը բերեց»։

Արովյանին հակառակ եր մտածում Պատկանյանը։ Նա հայ ժողովրդին սպառնացող վտանգը տեսնում է ցարական Ռուսիայի կողմից։ «Մշակ» վոտանավորի մեջ նա ազդարարում է, թե «սելավ կուգա հյուսիսեն»։ «Արաքսի արտասունքի» մեջ Ռուսաստանը անվանվում է «ոտար փեսա» ու «գայթակղիչ», վորը զդթալի յե զարկել կովկասյան ժողովուրդներին։ Ծանոթ քառյակում նա կոտորվելու արժանի ոտարների շարքում հիշում է նաև նենդ ռուսին։ «Փեսաներ» վոտանավորի մեջ յերկու անգամ ցարական Ռուսաստանը կոչված է «Եորի կուժաստան»։

Վերջապես հիշատակենք «Ռորք Հայաստանի» վոտանավորը, վորտեղ նա դիմելով հայրենիքին՝ ասում է աշկարա.

Քեզ ոռւսը\*) թուր ձեռը բռնած  
Մարդ չի թողնում քեզի մոտ.

Թե մոտ յեկան, դարձյալ չե փույթ,  
Ունի շատ ոռւմբ ու վառող։

Վոր աչքերդ չի խըստըզեն  
Վառ շողերը արեգին,

Անթափանցիկ ու մեծ ասպար  
Ունի բռնած իր ձեռքին։

Կամ թե անուշ քնիդ խափան  
Չլինին նաև քու վորդիք,

\*) Տպված բնադրում պակասում ե «ոռւս» բառը։ Մենք իմաստից հանելով յենթագրաբար դրինք «ոռւս»։ Հետո ուրախությամբ տեղակացանք ընկեր Յերվանդ Շահաղիզից, վոր Պատկանյանի յերկերի մի հին, տետրակում հենց այսպես ել նշանակված է։

Սպառագեն պահապաններ  
Նոցա վրա կան հերթ:

Թուսատյաց Պատկանյանը յեվրոպասեր եր: «Ազատ  
յերգերի» հեղինակը յեվրոպական դիմուղզման վրա  
մեծ հույսեր եր դրել: Դեռ Բեռլինի 61-րդ հոդվածից  
հետո ել, յերբ մեղմացել եր որա թողած հուսակործան  
տպակորությունը՝ Գամմառ Քաթիպան դարձյալ յերդ-  
վում եր.

Չե, չե, դահիճք չեն լուսավոր ազգեր,  
Վստահ ենք, նոքա չեն մորթիլ հային,  
Չի հուսահատվինք, իմ յեղբայր հայեր,  
Մեզ ել իրավունք կուտան մարդկային: \*)

Հովհաննիսյանը միանգամայն ձեռնթափ է թե՛ Ա-  
րովյանի ու թե՛ Պատկանյանի որիենտացիաներից: Վոչ  
«քրիստոնյա» Ծուսաստանից ոգնություն, վոչ ել «լու-  
սավոր» Յեվրոպայից ակրնկալություն:

Բավի ինչ ապրեցանք անմիտ խոսքերով  
Յեկ թեթեվամիտ սին յերազներով...

Տարիների գլորվելին ու թշվառության հարաւե-  
լումն անողնականության նույն ճիչն է խլում նրա քնա-  
րի լարերից.

Ո՞վ անբախտ յերկիր, և այս նոր տարին  
Չը երեց պայծառ որվանդ ավետիք.  
Կարուտ մնացիր դարնան արևին,  
Ծուխի պես ցնդեց յերազդ գողտրիկ:

\*) Մեր հեղինակներից Խաֆֆին յերիտասարդ հասակում  
սաստիկ դեմ եր սուսական որիենտացիային (Հմմտ. «Սալլու»  
առաջարանը), իսկ Հովհաննես թումանյանը համաշխարհային  
պատերազմի ժամանակ՝ ջերմ կողմնակից (Հմմտ. նրա «Վեր-  
ջին առաջնապը» վոտանավորը «Հորիզոն» լրագրում, Թիֆլիս,  
1914, նոյեմբերի 9, № 250 ու «Վերջին որր» բանառուեղու-  
թյունը, «Հորիզոն» 1915, մայիսի 2, № 94:

Արտաքիմ ոգնության վրա հույս չղբած բանաստեղ-  
ծին մտատանջության մեջ է ձգում ներքին ույժեղի տկար  
ու անպատրաստ լինելը:

Կոփկ ե այս կյանքն, և այս կոփի մեջ  
Վորքա՛ն անպատրաստ, տկար մեր ույժեր.  
Բայց մենք զնում ենք մի հուսով անվերջ  
Յեվ չունինք վոչինչ մենք այլ քաջալեր:

Բնակալները գորեղ են, ներքին ույժերը՝ թույլ:  
Այսպիսի պարագայում անհրաժեշտ եր ույժերի ծայրա-  
հեղ տնտեսում: Սրա հակառակ բանաստեղծը տեսնում է  
մի համուռն ու ցավալի գործելակերպ,

Յերբ մենք միշտ պատրաստ մի ծանր կոփի՝  
Վատնում ենք ույժեր դեռ չկազդուրված:

Գաղափարների այս կապակցությամբ նոր ու այժ-  
մեյական լուսաբանություն են ստանում «Սյունյաց իշ-  
խանի» հետեւյալ տողերն ել, վորոնք մարդարեական են  
և կարծես գրված են համաշխարհային պատերազմի  
աղետարեր բաղխումների ու մեծ տարագրության ժու-  
մանակ.

Յեվ դո՛ւ, ուժասպա՛ռ, վիրավո՛ր յեղնիկ,  
Ի՞նչպես կամեցար պարսիկ առյուծին  
Կոփի յեղնել... Անրախար հայրենիք,  
Արյունդ հոսում եր հեղեղի նման, —  
Գու նոր վերքերով մի՞թե հարություն  
Կամեցար առնել... Յերեսիդ վրան  
Դեռ չեր ցամաքել արտավաց առուն—  
Մի ժպիրչ ճակատ գու զոս վտանգին  
Յույց տվիր անահ: Յեվ ի՞նչ. փոխանակ  
Որոր ասելու նիրհող զազանին,  
Մոսկալի մարտի զարկեցիր կոչնակ...

Անշուշտ, բանաստեղծը շատ ավելի իրատես է, քան  
ի պաշտոնե քաղաքակետները: Սակայն հենց այս իրա-  
տեսությունը չբացնում է ինքնապարծության միրաժ-  
մունք, «Հորիզոն» 1915, մայիսի 2, № 94:

ները, և պարզվող տեսարանում նկարվում է անմիտիթարու անմիտիթարական կացությունն աշխարհակալ պետությունների մրցությամբ զոհ դարձած փոքրիկ ժողովրդի.

Մահամերձ հիվանդ՝ անփա՛ռք ապրեցար,  
Հալվում ես կամաց գու մոմի նման.  
Դու կալծեր տվիր, խարույկ չունեցար,  
Գնում ես գեղի անխաչ գերեզման։

Զի յերգում այլես, այլ կոծում ե բանաստեղծը։  
Սիրելու սնարին սմքած՝ սրա սուդը սարսուռ ե ազդում։  
պարզ լսվում է սեվակնած սրածողի սառնաշունչ սոսա-  
փյունը...

### VIII

Հանրային յերկու հատվածի վիճակն ել—թե տաճ-  
կահայերինն ու թե ուսուահայերինը—սև դույներով ե  
պատկերանում Հովհաննիսյանի աչքին։

Այնտեղ՝ սուլթանիզմի Սցիլան, այստեղ՝ ցարիզ-  
մի Խարիբդան։

Սուլթանական թուրքիան պոետին ներկայանում ե  
անշեն անապատ ու ժողովրդական սպանդանոց, վորի  
մասին նաև ութսունական թվականներին պատմում ե  
լրաբեր քամու բերանով։

Յես սլանում եմ չորցած դաշտերից,  
Ուր հին ավերակ նոր ավերակին  
Միշտ տեղ ե տալիս. բոլոր կրծքերից  
Լոք հառաչանք ե թռչում դառնագին։

Ուր չկա անզուսապ կրքերին սահման,  
Ուր որ ու գիշեր խիստ դատավճռին  
Սպասում են անթիվ զոհեր բռնության,  
Ուր չկա ժպիտ մեկի յերեսին։

Այնտեղ թոշնում ե վարդը կոկոնում  
Չտեսած շողը վոսկի արելու...

Յեկ արդյոք յե՞րբ և այն թշվառ յերկրում  
Փրկության գարուն նորից ծաղկելու...

90—ական թվականները վոչ միայն չարդարացրին  
մի լավ ապագայի նրա ակրնկալությունը, այլ ելավելի  
հոսախարեցին. ոկավեցին տաճկահայերի սոսկալի  
ջարդերը, վորոնց ծանրության տակ բոլորովին կուչ  
յեկավը բանաստեղծի հոգին։

Յեկ այսոր ահա արյան հեղեղից  
Շառագունեցավ յերկինքը վճիտ,  
Անզոր հատաշանք, ճիշեր վշտալից  
Մեր յերեսներից խլեցին ժպիտ։

Աչք ենք դարձընում ամենքս ակամա  
Դեպի այն տիսուր հովիտն արտասվաց,  
Ուր հայ գութանի յերգն ամենորյա  
Դարձել ե ավեր վողբացող մի լաց։

Պոետը նորից հիշեց և յերգեց գարնան մասին, բայց  
այս «նոր գարունը» նրա յերազած «փրկության գարու-  
նը» չեր, այլ ավերի ու սրածության գարուն։

Սեվմութ պատեց աշխարհին,  
Սար ու ձոր դատան արին,  
Մեղ վայ բերեց ես տարին,  
Ուր ես գալիս, այլ գարուն։

Դու յետ բերիր հավքերին,  
Ո՞նց տեր ըլնեն բներին,  
Սաղ տեղ չկա մեր յերկրին  
Զուր ես գալիս, այլ գարուն։

Պոետի հանրային շահագրգության գլխավոր որ-  
յեկան ելի «արտասվաց» հովիտն եր, Անդրմասիսը, ինչ-

ուես վոր յեղել եր Պատկանյանի ու Ռաֆֆու Համար՝ Շահազդիցի ու Պոռյանի հակառակ, վորոնց ուշագրությունն ավելի սեվեռված եր ոռւսահայ Հասարակական հարցերի վրա: Բայց և այնպես Հովհաննիոյանին մտահոգում եր նաև ոռւսահայերի կացությունը, Այսօրմասիսը:

Խաչատուր Արովյանի հիշատակին նվիրած վոտանավորի մեջ, վոր ցարական զրաֆնությունն արգելել եր հրատարակել, բանաստեղծը ոռւսական ուեժիմը նկարում ե իբրև մի դաժան ու հեղձուկ վոտիկանական միջավայր: յուր ապրած այն ժամանակաշրջանը նա անվանում է «դառն որեր»,

Յերբ ահն ու կասկած  
իբր յերկանաքար, հանդերձ կապարի,  
Պատել ե, խեղդել միտքն հասարակաց,  
Յերբ կոպիտ ձեռքըն անլույս խավարի  
Յեփ խարազանը անզուսպ բռնության  
Միայն բերում ե հուսահատություն,  
Մինչև յերկյուղով ստվերը սեփական  
Ընդունել վրիժառու մարմնավորություն:

Ոռւսահայ իրականության մեջ գլխավոր վտանգը այլասերումն ե. ստեղծվում ե մի մթնոլորտ, վորտեղ բռնուն թափով առաջ ե գնում ազգային ու քաղաքացիական դիմազրկման պրոցեսը.

Այս դատարկ կյանքի անմիտ խնջույքում,  
Ուր աննպատակ անցնում են որեր,  
Ուր ամեն վառ կիրք, ամեն սուրբ զգացում  
Եեղդում են չնչին առորյա հոգսեր.

Ուր բաքոսական զեղիսություններով  
Մաշվում ե, թոշնում ծաղիկ հասակի,  
Ուր ունայն վառքի սին յերազներով  
Զոհվում ե բերկրանքն ապատ վիճակի.

Յերբ վոսկի հորթին տաճարներ կանգնած Մենք վաճառում ենք ե' խիզճ, ե' ամոթ, Յեվ նորա համար աստված մոռացած Ել արդարության չենք քաշում կարոտ.

Յերբ մեր անզգա կրծքին կախ տալով  
Մի ցնորական պատվի բոժոժներ  
Միրել են տալիս մեզ նենդ զգվանքով  
Անարդ սարուկի թունոտ շղթաներ:

Թեհ բանստեղծը պարզ չի չետում, բայց նրա տված պատկերներից հետ ե յեղբակացնել, վոր ոռւսական իրականության մեջ հայերին սպանացող այս այլասերումը խոչը կենարոններումն և կատարվում է վոչ թե գյուղերում, վորտեղ կյանքն էհարկե զժվար ե անվանել «խնջույք» ու «բաքոսական զեղիսություններ», և վորտեղ անշուշտ չկան «կրծքի պատվի բոժոժներ» ու «վոսկի հորթի տաճարներ»:

Այսպիսով յեթե տածկահայերի հանդեպ ծառացած եր տնտեսական-կուլտուրական վայրենացումն ու Փիգիկական բնաջնջման որհանը, ոռւսահայերին սպանում ե ցարական «խարազանը անզուսպ բռնության» կամ «նենդ զգվանքը», վոր «սիրել ե տալիս անարդ սարուկի թունոտ շղթաներ», այլև քաղաքների այլասերումն ու ապականությունը:

Ճնորոշ ե այն, վոր չնայած կովկասյան քաղաքներում արդյունաբերական կապիտալի մուտք գործելուն ու գործարանային պրոլետարիատի հրապարակ գալուն՝ Հովհաննիսյանի տպված բանաստեղծությունների մեջ չենք նշմարում վոչ միայն գործարան ու բանվոր բառերը, այլ և նույնիսկ քաղաք բառը: Քաղաքային կյանքի տեսարաններ, վոր այսպես թե այնպես ելի կարելի յե գտնել Շահազդիզի վոտանավորներում, նույնպես չի տվել նա յուր տպված բանաստեղծությունների մեջ:

Քաղաքի շերտավորումը, որու զարգացման հեռա-  
նկարներն ու կարենորությունը հասարակությունը վե-  
րակազմելու տեսակետից՝ հասկանալի չեղավ պուտին  
վոչ յերիտասարդ ու վոչ ել ծերունի հասակում։

Սակայն այսպես չեյին նրա ժամանակակիցներից  
վոմանք 80-ական թվականներին ուսուահայ իրակա-  
նության մեջ։ Արանցից մեկը, անդրանիկը հայ մարք-  
սիստներից, պատմում ե.

«1885 թվի ամառը Գանձակի գյուղերով մի պտույտ  
անելուց հետո, մնացի մոտ մեկ ու կես ամիս նյութ-  
գյար գյուղում... «Եփկոլի» աղբյուրի մոտ նստած՝  
կարդում եյի սիրուհու նամակի պես կասալը...»

— Այդ ի՞նչ եք կարդում, — լսում եմ հանկարծ։  
— Կարդում եմ կասալը, — պատասխանեցի յես։  
— Լասում է, ինչպի՞ս գտաք, չե՞ վոր արդելված է։  
— Գիտեմ արդելված է, գտա և կարդում եմ։

Լասումի գրվածքի ընթերցանությունը ինձ վրա  
ցնցող տպագրություն թողեց»\*)։

Լասումի ու Մարքսի ընթերցանությունից առա-  
ջացած այս ցնցումը, վոր շուտով ցնցելու եր ամբողջ  
հայ իրականությունն ու գրականությունը, դժբախ-  
տաբար չի շոշափել չովհաննիսյանին։

## IX

Բանաստեղծի կարձ, խորիմաստ ու ցնցող այն  
խոսքը, թե

Դու կայծեր տվիր, խարույկ չունեցար, —  
վոր նա ուղղել ե հայրենիքին և վորի մեջ տվել է  
յուր յերկրի յերկհաղարամյա պատմության ընութա-  
գիրը, կարող ե զարմանք առաջ բերել այն ընթերցողի  
մեջ, վոր հայ հեղինակից սովորաբար դովք ու հիաց-

\*) Գեվորգ Ղարաջյան (Ս. Տ. Արկոմեց) «Անցյալի հիշու-  
թություններից», Թիֆլիս, 1918, եջ 35—36։

մունք ե լոել ազգային անցյալի մասին։ Այս զարմանքի  
առթիվ պետք ե հիշեցնենք յերկու հանգամանք. նախ,  
վոր Հովհաննիսյանի հիշյալ խոսքերը պատահական  
չեն. նու նույն միտքն ավելի ընդարձակ զարգացրել ե  
ուրիշ տեղ, և յերկրորդ այն, վոր բոլոր հայ հեղինակ-  
ներն ել ազգային անցյալի նկատմամբ անխտիր միե-  
նույն վերաբերմունքը չեն ունեցել միշտ։

Սրանցից շատերին հայ անցյալը յերեացել և իրեւ  
մի յերանալիք ժամանակաշրջան, յերբ թերություն-  
ները, յեթե յեղել են, քաղաքական-վարչական չեն ու  
վոչ ել տնտեսական-սոցիալական։ Նրանց նկատմած գլխա-  
վոր թերությունը բարոյական է. հին հայերն անմիա-  
բան եյին, ատեցող, նախանձոտ։

Սակայն կա հայ գրողների մի փոքրաթիվ խումբ ել,  
վորին հայ անցյալն վոսկեղար չի թվացել. սրանք այն-  
տեղ նկատել են վոչ միայն բարոյական ստվերակողմեր,  
այլ և քաղաքական-վարչական ու տնտեսական-սոցիա-  
լական այնպիսի յերեւոյթներ, վորպիսին ե հայրենի  
բռնակալությունը, հայ գասակարգերի հակամարտու-  
թյունը, ժողովրդական մասսաների շահագործումն ու  
հարատահարումը հին Հայաստանում «փառապանծ» իշ-  
խողների կողմից։

Առաջին կարգի հեղինակները հիացած են, վոր ան-  
ցյալում տեսնում են հայ հաղթական արքաներ, հայ  
քաջարի իշխաններ, հայ մեծազդեցիկ հոգեօրական-  
ներ։ Նրանց յերկերում աչքի յե ընկնում շքամոլ ու ծա-  
ռայամիտ հայրենասիրությունը, վոր այս գեպքում  
հանդես ե զայիս իրեւ պատմագրական արխատոկրա-  
տիզմ։

Յերկրորդ կարգի գրողները հիասթափված են հայ  
անցյալից, վորովհետև նախկին դարերում աննկատելի  
յեն կամ աննախանձելի վիճակ ունեն բուն ազգը, հա-  
սարակ ժողովուրդը, ստորին գասակարգերը։ Սրանց  
գրվածքներում յերեւում ե պարզասիր ու պլերեյական

նացիոնալիզմը, վոր Հրապարակ և յելնում վորպես  
պատմագրական դեմոկրատիզմ:

Հովհաննիսյանի տերմինով յեթե ասենք, առաջին-  
ները «խարույկի» թեորիան են ընդունում, իսկ յերկ-  
որդները՝ «կայծերի»:

Ճիշտ ե, ինքը Հովհաննիսյանը մի քանի վոտոնա-  
վորի մեջ յուր տուրքը տվել է «խարույկի» թեորիային՝  
մերթ բնող մերթ հիշելով «անցած փառքը», «դժուցա-  
զանց վողին», «փառավոր նախորդներին» և այլն, —  
բայց և այնպես չի կարելի ժխտել, վոր այս թուցիկ  
հիշատակումների կողքին նա ունի ընդարձակ ու մե-  
ծարժեք հջեր ել, վորտեղ հանդես և գալիս նրա պատ-  
մագրական անուրանալի ու բավական արմատական  
դեմոկրատիզմը:

Բանաստեղծը մի քանի պատմական նյութերի մասին և  
գրել: Սրանցից «Վահագնի ծնունդն» ու «Արագագողը»  
սիմվոլիկ իմաստավորում են ստացել, և միմիայն  
«Սունյաց իշխանն» և, վոր իրական պատմա-հոգեբա-  
նական մշակման և յենթարկվել: Այս պոեմայի մեջ ել  
չենց գտնում ենք հայոց պատմական անցյալի մասին  
բանաստեղծի վերաբերմունքն ու արտահայտած խիստ  
դաստավճիռը\*):

Պոեմն ընտրել և մի գժվարին նյութ՝ ըմբռաստ-  
նալով ավանդական հայացքների դեմ: Նրա հերոսը  
5-րդ դարի քաղաքական գործիչներից մեկն է — Վասակ  
Սյունին, պարսկական գիմուղղման պարագալուսը, վո-  
րին հազարամյակների ընթացքում անարգել և սեւց-  
րել և հայ պատմագրությունը, և նզովել հոգեվորակո-  
նությունը՝ գովասանքն ու դափնիները տալով նրա  
քաղաքական հակառակորդին, Վարդանին — կանո-

\*) «Սունյաց իշխանի» սկզբի 5 քառյակը խիստ աղջված է  
Նաղսոնի „Из тьмы времен“ բանաստեղծության սկզբի 5  
քառյակից: Շարունակությունը միանգամայն տարրեր և Նաղ-  
սոնի գրածի մեջ Հերոսության և հերոսը:

նական սրբերի շարքն անցած Մամիկոնյանին, վոր  
բյուզանդական որենտացիայի ղեկավարն եր <sup>\*)</sup>): Վա-  
սակի մասին շատերն են դրել Հովհաննիսյանից առաջ:  
Սունյաց իշխանին բանաստեղծության նյութ դարձրել  
և նաև Ալիշանը «Դասաստանիք վասակա մատնչի» վեր-  
նագրով պոեմայի մեջ<sup>\*\*</sup>), բայց Ալիշանն ել իրը և հոգե-  
վորական, ու այն ել պատմագրական արխատկրատիզմի  
ներկայացուցիչ, չեր կարող տնտչառ լինել Սյունյաց  
իշխանի նկատմամբ. նա ել և Վասակին նկարում իրը  
փառասեր, անձնամոլ, դավաճան, վոր արժանի յել  
զնդանի խավարին ու դժոխքի բոցերին:

Հովհաննիսյանը չի ընկճվում հաղարամյակների  
ընթացքում ավանդական դարձած վերաբերմունքից,  
անտես և անում հին ազգային տեսելությունն ու յե-  
կեղեցու սաստը և նոր ակնոցներով և նայում վասակի  
արտաքին ու հոգեկան աշխարհին: Սոսկական քրեա-  
կան տիպի փոխարեն նա նրա մեջ տեսնում և հեռահա-  
յաց հայրենասեր, իրատես քաղաքագետ, վորդեսեր  
ծնող, սայշթաքած առաքինի ու տանջվող հանցագործ:  
Վասակը պատկերանում և վոչ միայն իշխանի, վոչ  
միայն հայի, այլ և մարդ եյակի ապրումներով:

Վասակի տրագեդիայի այսպիսի ըմբռնումը մի  
կատարյալ հերձված եր. առաջին անգամ եր, վոր պատ-  
մական մի խոչոր անցք ու սրա գործիչները բանաստեղ-  
ծորեն պատկերացվում եյին վոչ յեկեղեցու տեսակետից:  
Մինչև անդամ հայ պատմագրիառ թյունը դեռ քննական  
ակնոցներով չեր մոտեցել 5-րդ դարի կրոնական կոչված  
պատերազմին ու սրա հերոսներին: Հովհաննիսյանի

\*) Մենադարի միակ հայ մատենագիրը, վոր պատափետում  
եր յուր ժամանակված հայերի բյուզանդական որիենտացիան  
ընդգրկած ապստամբական շարժումները և ջառագրում հա-  
կարյուղանդական հոսանքի քաղաքականությունը, 8-րդ դարի  
պատմագրիր Ղեղոնդն է:

\*\*) «Եվաղք», Գ. պրակ, Վենետիկ, 1867, Էջ 129—143:

պոեմայի գրվելուց ու տպվելուց (1887 թ.) բավական ժամանակ եր անցել, յերբ հրապարակ յեկավ պատմագետ Գարգաղյանը Վասակին լիովին արդարացնող յուր Հայոնի կարծիքով\*):

«Սյունյաց իշխանը», վոր մի սեղմ ու սիրուն դրամատիկական պոեմա յէ ազատամիտ հայացքներով, խոր հոգեբանությամբ, ցայտուն հակադրություններով, վառ պատկերներով, վոլորուն պարբերություններով ու պերճ լեզվով, վոչ միայն գեղարվեստական նորություն, այլ և իդեոլոգիական մի խիզախ մարտահրավեր միջնադարյան մտածողությանն ու պատմահայացքին.

Բայց այդ անցյալի խորին խավարից  
Ահա առնում ե հոգումս հարություն,  
Նա, վոր մերժված ե բոլոր աշխարհից,  
Վորի հիշատակն հանդիմանություն  
Լսել ե միայն: Բայց անեծքների  
Անվերջ կարկուտը ինձ չե շփոթում.  
Սև գրոշմի տակից մաշված ճակատի՝  
Յես նրա այրող տանջանքն եմ տեսնում:

Հովհաննիսյանը բոլորովին չի արդարացնում Վասակին, բայց գեղարվեստական վայլուն եջերում տալիս ե նրա հոգու բարդ ու հետաքրքրական յելեվեջներն այնպես, վոր ընթերցողի մեջ վոչ միայն կարեկցություն, այլ և համակրանք ե զարթեցնում: Պոեման համակրում ե խորապես: Վասակի հոգեկան դրաման ծավալվում ե և սաստկանում՝ անցնելով չորս հանդույցից, վորտեղ ուժգին իրար են բախվում հերոսի մարտական խոյանքն ու ընտանեկան ոջախի կարուտը, նրա կորովի հայրենասիրությունն ու քնքույշ զավակասիրությունը (Վասակի վորդիները պատահդ ելին պար-

\* ) Հմմտ. Ա. Ա. Գարգաղյան «Քննական պատմություն Հայոց», մասն Դ., Թիֆլիս 1895, Էջ 132, 139 ու 144:

միկ արքունիքում և կվտանգվելին հայերի ապատամբության դեպքում), հակառակորդների քաղաքականության սխալ ընթացքի համոզմունքն ու նրանց անձնվիրարար նահատակիված հանդիսանալու գիտակցությունը և վերջապես դավաճանության նկատմամբ զգացած նողկանքն ու դավաճանած լինելու սոսկումը:

Պոեմայի մեջ իդեոլոգիական տեսակետից խիստ կարեսը են յերեք հատված՝ այն, վորտեղ իտուագոր անուն ու հիշատակ ժառանգած իշխողների գործունեյությունը լակոնաբար բնորոշվում ու մերկացվում է, իրբի «արյան պարատներ», անառակության խայտառակ տաճար և արենապիղծ շամբշոտ գիշերներ». յերկրորդ՝ շարունակությունը կազմող տողերը, վորտեղ բանաստեղծը բացասական վորակումն և տակու Վարդանանց «հայդուկային» գործունեությանը, և վերջապես Յ-րդն ու վերջինը—պոեմայի խորագինին ու կծու նախերգանքը, վոր հայ պատմագրական գեմոպատիզմի ամենանշանավոր գրվագներից մեկն է.

Արյան վայլով, տանջանքներով անմահացած,  
Ինչպես ցնորդ յերեսւմ են որերն անցած.

Յես չեմ կարող նոցա նայել լուս պարծանքով,  
Այլ մի խորին ցավակցության զգացմունքով:

Ի՞նչ մեղ թողին մեր քաջարի գոված նախնիք,--  
Լացի, վորի անփառունակ մի հայրենիք... .

Յեկ անձրեր ծաղկափսակ վաս փունջերի,  
Վոր մանկական բերկությունով՝ անմիաների

Առաջին ենք մենք առածում, յես մի նշան  
Համարում եմ մեր փոքր հոգու աղքատության.

Եղթան սիրող ստրուկների մի բազմություն—  
Ահա նոցա թողած անփառ ժառանգություն:

Այս տողերն անզիր անեյն ու միշտ մտքում պահելիք մեծ ոգուտ կտար վոչ միայն հայ անցյալն ուսումնա-

սիրող ծառայամիտ պատմաբաններին, այլ և նացիոնականականին ինքնապարծությամբ հուացած պարախանամոլ քաղաքագետներին:

Յեղել են բանաստեղծներ, վորոնք անուն են Հանել մի քանի, յերեմն նույնիսկ մեկ հատիկ վոտանավորով: Յեթե Հովհաննիսյանն ուրիշ վոչինչ գրած չըներ, նա հայ պոեղիայի պատմության մեջ իրեւ անվիճելի մեծություն կհիշվեր յուր «Սյունյաց իշխանով», վոր մինչեւ հիմա ել մեր գրականության մեջ նմանը չունի յուր տեսակում: Իսկ յեթե նա գրեր այս պոեմայի նախերդանքը միայն, անաչափ պատմագիրն այս գեղքում ելի նրա անունը կմտցներ հայ հանրային մտքի պատմության մեջ՝ նրան դասելով պատմագրական դեմոկրատիզմի այնքիսի նշանավոր ներկայացուցիչների շարքում, վորպիսիք են Շահամիր Շահամիրյանը, Մատթեվոս Մամուրյանն ու Արտեն Թոփիմոխյանը:

## X

Ազգայնական հոսանքի գրողներին ընդհանրասովես հատուկ ե այն մտայնությունը, թե յերկրի թշվասության գլխավոր պատճառը քաղաքական նվաճումն ե ուսարի կողմից: Արա համաձայն ել նրանք մասսաների տառապանքի ու հարստահարության վերացման ուղին համարում են ոտար տիրապետողի լծից ազատագրվելը: Յեթե չինի այլազգի բոռնցքը, յերկիրն ելի կղանամի բարելի դրախտ\*):

Տնտեսապես յերջանիկ ե պատկերացվում հատկապես հայ գյուղը, վորի իդեալացումը գտնում ենք վոչ միայն հայ վիճակության մեջ (Խաչատուր Արովյան),

\*.) Թափփին «Մշակ» վոտանավորի մեջ մինչեւ անգամ իրեն գյուղական միջավայրում գործող վաշխառուական կապիտալի ներկայացուցիչ դնում ե պարսկին կամ մահմեղականին (Հմմտ-«Աղբյուր», 1883, № 8—9, էջ 279—284):

այլև հայ նոր պոեղիայի մեջ, Թափփայել Պատկանյանի, Մեսրոբ Թաղիաղյանի և Ուրախակից-Բարեկամի վոտանավորներում:

Թափփայել Պատկանյանը «Եինականի յերեկոյան յերպի» մեջ նկարագրում է գյուղական փոքրիկ ընտանիքի բարոր ու գոհ վիճակը, իսկ «Յերկու պատկեր» վոտանավորում՝ գյուղական նահապետական անպարտք ու անկարոտ գերգաստանի ծով տունը, վոր կործանվում է ոտարի բոնությամբ: Մեսրոբ Թաղիաղյանը մի վոտանավորի մեջ, վոր ունի ուշագրավ «Տանտեսական» յերնագիրը և վորը մինչեւ այժմ գրիպել և մեր գրականության պատմությունն ուսումնասիրողների աչքից, հիտոցած նկարագրում է հայ գյուղի սակագագետ ու ապահով կենցաղը՝ վերջինս հակագըլով քաղաքացիների կյանքին\*): Վերջապես հիշենք մեր նոր գրականության մեջ հայ գյուղի անդրանիկ իդեալացումը, վոր հրապարակվել և մեզանից մոռ գար ու կես առաջ: 18-րդ դարում, 1795 թվականի ովդան ամսոի 30-ին (նոր տոմարով փետրվարի 25-ին) դրած մի վոտանավորում «Ազգաբարի» մի աշխատակիցը, Ուրախակից-Բարեկամը դովերգում եր գյուղական կյանքը Հայոց աշխարհում, իբրև մի բարերաստիկ, առանձնացած, անպահ ու արդարագործ կյանք, վորտեղ «Աստացվածքը բնական» և, ավելի ապահով, «միաբանական» և ավելի ապահով, քան «ունայն» քաղաքացին զրադմունքը\*\*):

Նման մտայնությամբ են տոգորված նաև Հովհաննիսյանի մի քանի բանաստեղծությունները, վորոնց նյութը հայ գյուղն ե:

Հովհաննիսյանը դեռ պատանի, 16 տարեկան, հիտ-

\*) Տպվել ե առաջին անգամ Կալկաթայի «Ազգասեր» հանդեսում, 1845 թ. աւգուստ 23, թիվ 2, էջ 12, և ապա շատ ուշ, 1884 թվականին, եջմիածնի «Արարատ» № 5-ում, մայիսի 31, էջ 216:

\*\*) «Ազգաբար», Մաղրաս, 1795, ովդան, էջ 28—29:

յած յերգում ե հայրենի յերկիրը, իբրև մի յերանավետ  
վայր, վոր ոժտված ե ամեն հրաշալիքներով։ Բնաբան  
ընտրելով «Իմ հայրենիքը տեսել ես, անա՛» հարցմուն-  
քը՝ պոետն զմայլանքով նկարագրում է բնաշխարհի գու-  
նազեղ համատեսարանը՝ սրա մեջ հատկապես հիշա-  
տակելով չեն ու ծաղկած գյուղը։

Տեսել ե՞ս արդյոք այն բլուրները,  
Ուր ճոխ ծաղկում ե մշտական գարուն,  
Կանաչում թաղված այն այգիները,  
Ուր իբրև գոհար խաղողն ե հասնում։

Տեսել ե՞ս գաշտեր, մարգագետիններ,  
Ու բացված այնտեղ վառ շուշան, մեխակ,  
Շնորհատու արե, վոսկի նշույներ  
Յեզ միշտ սիրաշունչ յերկինք կապուտակ։

Տեսել ե՞ս գյուղը հովտի մեջ մենակ  
Յեզ շուրջը փոված շքեղ պարտեզներ  
Յեզ վոսկի հասկեր և խաղաղ վտակ, —  
Լսել ե՞ս քաղցրիկ արտուտի յերգեր։

Մի ուրիշ վոտանավորի մեջ բանաստեղծը տալիս ե  
հայրենի բնության նկարագրության կողքին հայ գյու-  
ղական միջավայրի նահապետական գծերը։ Այս նկա-  
րագրության մեջ նա թեև քաղաքի անունը չի տալիս,  
բայց տողամեջ զգացվում ե, վոր գյուղի՝ նշող աըն-  
տեսական ու բարոյական հատկությունները չկան մի  
այլ միջավայրում, վոր անշուշտ քաղաքի վոլորտն ե։

Այնտեղ, վո՞հ, այնտեղ զերդ ո՞ձ գալարուն  
Կանաչ դաշտերով սահում ե Քասախ,  
Այնտեղ զերդ գոհար միշտ արեասուն  
Խաղողն ե հասնում վորթի վրա մատագ։

Այնտեղ աղբյուրներ վճիռ, ջինչ, բյուրեղ,  
Դալար ափերում կարկաչուն վտակներ,  
Այնտեղ բնություն մանուկ հրաշագեղ  
Միշտ պարզեռում ե ձեզ իր բարիքներ։

Թուչում եմ այնտեղ, ուր յերջանկանալ  
Կարող ե մարդը անխարդախ սիրով,  
Ուր խարեբային կարծիք վոխակալ  
Պատժում ե անխնա ամոթո սրով։

Թուչում եմ այնտեղ, ուր մարդ չե կարող  
Մնալ անտերունչ, անհույս ու անտուն,  
Ուր խեղճի համար սիրությունի վոխ,  
Ուր թշվառն ունի մխիթարություն։

Գյուղական միջավայրում մարդ չի կարող մնալ ան-  
տերունչ, անհույս ու անտուն։ Հինական աշխարհում չկա-  
վոխ ու ատելություն խեղճի ու աղքատի հանդեպ. Գյու-  
ղում անձարն ու թշվառը մխիթարություն են գտնում։

Մի ուրիշ վոտանավոր, «Հատիկը», մեղ հիշեցնում  
ե, վոր գյուղումն ել հոգս կա, այնտեղ ել կյանքը ծափ  
ու ծիծաղ չի միշտ. գյուղացին «գարդ» ունի, նրա սիր-  
ությունը «ջարդված»։ Բայց ինչո՞ւ։ Գյուղացու դարդը գյու-  
ղի տնտեսական հակամարտության հետեանք չի, այլ  
առաջ ե զալիս բնության պատուհասից ու այն գիտակ-  
ցությունից, վոր յերկրագործի աշխատանքը կախված ե  
բնության պատահականություններից։ Կարող ե անձրև  
բնության ժամանակ հարկավոր ե ծով գարճնել արեւա-  
չքալ. այն ժամանակ հարկավոր ե ծով գարճնել արեւա-  
չքալատի քրտինքը, վոր հատիկը ծարավ չմնա։ Գյուղա-  
ցու դարդը չքանում ե, յերբ նա հար ե ունենում հատիկը  
թաղելու, արտը ցանելու։ Նրա ջարդված սիրար հան-  
դածկում ալեծածան սավանով։

Ասացինք, վոր գյուղացու «գարդն» ու «սրտի ջարդ-  
ված լինելն» առաջ ե գալիս այն գիտակցությունից, վոր

նրա աշխատանքը կախված է բնության պատահականություններից: Բայց այս արաւահայությունը սխալ է: «Հատիկի» գյուղացին այսպես չի դառնում. նա մատերիալիստ չի. նա իրական գյուղացի յէ, կրոնական աշխարհայացքով տողորված: Հատիկը կրկանաչի, յեթե ասոված ուղենա: Անձրե կզա, յեթե տիրամայրը գթա: Արև կլինի, յերբ նա սիրով նայի գեղջուկի արտին: Բայց այս բոլորը կարող ե չլինել «մեղքերի» պատճառով, ուստի հարկագոր և մոմ վասել, խունկ ծխել, աղոթել, ապաշխարել ու ելի աշխատել: Գյուղի թշվառության պատճառը մեղքն է ու պատճառը: Գյուղը կերծանկանա աղոթքով ու աշխատանքով:

«Հատիկը» տողորված է կրոնական վոգով: Բայց այս նրա հատկանիշներից մեկն է, սակայն վոչ գլխավորը: Նրա գլխավոր հատկանիշը գյուղի տնտեսական-հասարակական հակամարտությունների անտեսումն է:

Կրոնական վոգի ուներ գերման գյուղացիական շարժման առաջնորդ Թոոմաս Մյունցերը: Կրոնական վոգի ուներ ուստափիական սոցիալիզմի հսկաներից մեկը—Սեն-Միմոնը: Ինչպես Պլեխանովն է հիշեցնում, կրոնական վոգի ունեյին նույնիսկ գեկաբրիստներից մի քանիսը: Դարձյալ՝ կրոնական վոգի ունեն Ղազարոս Աղայանի «Սերմնացանն» ու Հովհաննես թումանյանի «Փութանի յերգն» ել: Այս յերկու վոտնավորի մեջ ել գյուղացիք վարի ու ցանքսի ժամանակ գիմում են աստծուն փառարանությամբ ու աղերսանքով: Այս չի խանգարում, վոր նրանք պատմեն գյուղական պարտքի ու պարտատիրոջ, ավազակի ու քյոխվայի, հարկի ու թովքու, տկլորության ու քաղցածության մասին ել:

Այս վերջին հանգամանքն է, վոր Աղայանի ու Թումանյանի գյուղերգը դարձնում է Հովհաննիսյանի գյուղերգի պարողիա:

Հովհաննիսյանի ամրատնտես գյուղացու աշխատերգի մեջ աղոթքի կողքին չի զգացվում տնտեսական հարգածների ու սոցիալական գահավիժման սոսկումը:

Աղայանի ու Թումանյանի սակավազոր գեղջուկների աշխատերգի մեջ աղոթքի հետ լսելի յեն չքավորության շեմքին կանգնած աշխատավորների տնքոցն ու դառնությունը:

## XL

Կենտ մի հատ վոտանավոր ունի Հովհաննիսյանը, վոր ցույց է տալիս գյուղն ուրիշ կողմից, քան մինչեւ այժմ յերեսում եր նրա յերկերում: Այս բանաստեղծությունը «Գյուղի ժամն» է:

Արևամուտին գյուղական յեկեղեցու զանգերը զարկում են. աղոթավոր շինականները ժամ են շտապում. նախրի գալու ժամանակը մոտ է. գեղջուկ մայրը հորդորում է յուր մանկահասակ աղջկանը, Նազլույին, վոր գնան յեկեղեցի աղոթք անելու:

Ինչի՞ համար պետք է աղոթեյին գեղջկուհի ծնողն ու փոքրիկ նացլուն:

Ախ, Նազլու ջան, չես իմանում,  
Եգուց ելի աղան կզա,  
Նորա սիրտը միշտ անկշտում  
Ե՛լ ամպի պես պիտի գոռա.

«Ծուտով, Գրիգոր, փողերը բեր,  
Ելի՞ չկա. կոմդ հանիր»...

Ախ, Նազլու ջան, այն ի՞նչ բան եր,  
Մի՞ աղ է հերու... Տեր, դու փրկիր:

Հայրիկդ արդեն գնացել է,  
Վոր փող ճարի. յե՞րբ պիտի գա.  
Տեսնենք մեկը խղճացե՞լ է...  
Ախ, ու որը Տերն ել չտա:

Բարի մարդիկ միշտ կլինին,  
Հայրիկդ հետը փող կբերե.  
Փողը կտանք չար աղային,  
Վոր մեր բիժոն ել չխլե:

Նազլույի ձեռնապակաս հայրը, Գրիգորը, փող ե  
վեցքել գյուղական վաշխառութից, բայց ժամանակին չի  
կարողացել պարտքը հանգնել. անկշտում աղան ուզել ե  
փոխարենը կովը քաշել, տանել. Նազլույի հայրը մի  
կերպ հետաձգել ե տան ապբաւատը հասցնող կովի զավ-  
թումը. զնացել ե ոտարություն, փող ձարի, բերի,  
պարտքը տա, փոր չար վաշխառուն ել բիժոն չըխլի, և  
գյուղացու ընտանիքը չմնա անկով ու անհաց:

Գյուղի՝ գանգաղ ու տիուր հնչող զանգերը վաշխա-  
ռության ու գրամտունության մուտքն են զուժում  
գյուղական աշխարհը: Գրիգորները, փոր միամտորեն  
կարծում եյին, թէ հատիկը ցանելով իրենց դարձն ել  
հետը թաղել են և կամ թէ կարող են հանգիստ քուն վա-  
յելել, յերբ արդեն արտը ծածկված ե արեծածան դա-  
րալիքով, հիմա ընկել են մի նոր, ավելի զորեղ ու անխնա  
«սրբի» ձեռ: Առաջ տիրամերն եր գյուղի «աղան». Հի-  
մա գրամտուերն ե գյուղի «օռուրը»: Սրան այլիս չի կա-  
րելի շահել խունկ ու մոմով. որան հարկավոր ե տոկոս ու  
վաշխ. աղոթքն ու ծնադրությունն ել չեն փրկի. ոկտք  
ե տալ կովն ու վերջին բիժոն ել:

«Գյուղի ժամի» մեջ ել տեսնում ենք աղոթքի տրա-  
մադրություններ, բայց հիմա աղոթողը շատ ալելի յե-  
մտահոգված, քան «Հատիկի» մեջ: Այստեղ ել զտնում  
ենք եռու փորոշ լավատեսություն, միամտություն այն  
մասին, թէ «թշվառին» միշտ կա միխթարություն. ա-  
պացուց՝ գեղջկուհու այն խոսքերը, թէ «քարի մարդիկ

միշտ կլինեն, հայրիկդ հետը փող կրերե»: Բայց միաժա-  
մանակ նշմարիում են կասկածի խայթոցներ ել. «տես-  
նենք՝ մեկը խղճացե՞լ ե. ախ, ո՞ւ որը ծերն ել չըտա»,  
«եղուց տեսնենք, վոր վեր կենանք, ի՞նչ նոր արե և մեզ  
ծագում»:

Յեթե «Հատիկի» շինականը հողի վրա նստած արն-  
տեսատերն եր յուր վար ու ցանքով, յուր կալ ու կուտով,  
«Գյուղի ժամի» Գրիգորն արտից ու կարտեղից զրկը-  
ված մի գյուղացի յե, վոր ընտանիքը մի բիժոյի հույ-  
սին թողած՝ բոնել ե տարերթի ուղին:

«Գյուղի ժամը», վոր կինոնկարի պես պարզ ու ակ-  
նառու տեսարաններ ունի և մի փոքրիկ համերգ ե, վոր-  
տեղ լսվում են գյուղի զանգերի զարկերը, ժամավորնե-  
րի վոտնաձայները, մոտեցող նախրի բառաջուն թո-  
փորը, վաշխառույի վորոտի արձագանքները, Նազլույի  
մանկական շշունջն ու վերջապես, իրեւ թշվառության  
հակադրություն ու դառն հանկերգ, չքավոր մոր մըր-  
մունջը—

«Տե՛ր փառքդ շատ» . . .

մի հոյակապ նախերգանքը կարող եր լինել պուստի  
մի այնպիսի գրական գործունեյության, վորը նրան  
կտար վոչ թե նազոսնի, այլ . . . Նեկրասովի հազվագյուտ  
դափնիներ:

Բայց ափսո՞ս, վոր հանգամանքների բերումով չով-  
հաննիսյանը չդիաց այս ճանապարհով: «Գյուղի ժա-  
մը»—Աղայանի «Սերմնացանի» ու «Ճախարակի յերգի»  
և Թումանյանի «Գութանի յերգի» հետ դաշնակվող  
այս ընտիր բանաստեղծությունը— նա այնքան քիչ եր  
կնահատում հետագայում, վոր այս գողարիկ վոտա-  
նավորը 1908 թվականին չըմացրեց յար «Բանաստեղ-  
ծությունների» նոր հրատարակության մեջ:

Անկասկած, նա հետավոր Մոոկվայից շատ ավելի  
լավ եր տեսնում անսավեր Գրիգորներին, ծեծկած զեղ-  
ջկուհիներին ու իսեղձիկ նազլուներին . . .

## XII

Կանանց հարցը, վոր այնպես նկատելի ու նույնիսկ  
խոշոր տեղ ե բռնում արևելահայ բանաստեղծների յեր-  
կերում, Հովհաննիսյանը բոլորովին չի շոշափում: Նա  
կնոջ բերանից գրած յերկու վոտանավոր ունի ընդամե-  
նը, մեկը վերոհիշյալ «Գյուղի ժամն» ե, իսկ յերկրոր-  
դը՝ գեղջուկ մոր վողը ե յուր մեռած զավակի վրա  
«Աղիկ բալա, ջան բալա»: Նրա յերկերի մեջ բացա-  
կայում ենակ աշխատող կնոջ պատկերը:

Արտ վոխարեն նրա բանաստեղծությունների մեջ նշանավոր տեղ է բռնում սերն ու սիրերդը։ Տանք ընդհանուր գծերով նրա սիրերդի սոցիոլոգիական բնութագիրը։

Նախ՝ դիտելի յէ մի գլխավոր կետ։ Վորքան ստըրկացած է հասարակության մեջ անհատը, այնքան ստըրկաբար և մոտենում բանաստեղծը յուր սիրականին (հմտ. Սայաթ-Նովա)։ Սիրային քնարերգության մեջ Հովհաննիսյանն իրրենոր ժամանակի դեմոկրատական Հոգեբանության տեր մարդ չի մտցնում ծառայական վերաբերմունք. նա ցածից, գետնաքարշ չի նայում սիրած աղջկան։ Նրա սիրերդի մեջ բոլորովին բացակայում է սիրուհու չքեղ հազուստի ու ճոխ զարդարանքի թվարկությունը, վորի ներկայությունն ավելի շուտ չտեսի հոգեբանություն ե ցուցադրում (հմտ. Սայաթ-Նովա)։ Նրա սիրային վոտանավորի մեջ շատ յերկրորդական տեղ է տված նաև արտաքինի մանրամասն նկարագրությանը (հմտ. Սայաթ-Նովա)։ Հազվագյուտ անգամ է նա տարվում Փիղիկական գեղամասերի ու սրանց հարուցած հույզերի նկարագրությամբ («Ծննման ես, ինչպես հրեշտակ յերկնային»)։ Հմտ. Սայաթ-Նովա)։ Բնդհանուր առմամբ նրա յերգերի մեջ չկա այն մարմնաբաղձ կիրքը, վոր արեելյան պոեզիայի հատկանիցն է համարվում, այն ինչ իրոք կարգածատիրական վերին խավերի հոգեկան զարգացման ստորին աստիճանի արտահայտությունն է ու նրա թողած ժառանգությունը։ Նրա ուշը գրավում է գեղեցկուհու հոգեկան աշխարհն ել։ Վերոհիշյալ բոլոր հատկանիցների շնորհիվ նրա սիրերդը հազվագյուտ բարձր կուլտուրական կողմանից ունի և զգալի յէ դարձնում, վոր բանասերն իրողիտ ունի և զգալի յէ դարձնում, վոր բանասերն իրողի վոչ թէ կրքով կիզող տարփածույի գերին ե, ոյլ տեղծը վոչ թէ կրքով կիզող տարփածույի գերին ե, ոյլ սիրով ջերմացնող կին մարդու կարուն և քաշում։

Վորքան թույլ են տալիս դատել բանաստեղծի արած մի քանի ակնարկները, նրա սիրո առարկան անաշխատ դասակարգից ե.

Զերմոցում սնած դու վարդ նաղելի, Արցունքի մի շիթ չե կաթել թշիդ, Կյանքի փոթորիկն անվերջ, ահոելի Դեռ քո շրթունքից չե խլել ժպիտ։

Պոետը, վոր գյուղական միջավայրի զավակ լինելով լավ ծանոթ է սառրին խավերի կանանց չարքաշ կյանքին ու տառապանքին, մի հրաշալի սիրերդի մեջ դիմելով ժամանակառուն աղջկան՝ տենչում ե, վոր սրան համակի սիրո զգացումն այն աստիճանն, վոր գոնե այս դեպքում նա զգու, թէ կյանքում հոգու ու վիշտ ել կա.

Յեվ իմ միակ ցանկությունն է, վոր անրիծ Սիրող զգար սիրո հրճվանք և թափիծ, Յեվ գուրգուրանքն հասկանայիր զեփյուռի Յեվ սիրող թունդ զարկել տար բույրը վարդի, Յեվ զգայիր, վոր բացի խաղն, անհոգ կյանք, կա ակամա արցունք և վիշտ և տանջանք։

Մինչդեռ Սայաթ-Նովայի «զալում զողալը» պատահական գեղուհի յէ խաս ու աթլասի, ակնունքի ու վոսկեղենի մեջ կորած, նիստ ու կացով, հոգով ու զգացմունքով մի խսկական իշխանազն, մի բարձրահոն խոնուհի, իսկ Ավետիք իսահակյանի սիրուն Զարոն մի պարզուիկ ու նախշուն զեղջկուհի յէ սարերի հովոցում կամ բոստանի քողտիկի մեջ, շրջապատված սեղ ու ծաղկունքով, ուլ ու գառնուկներով և խաղերն ու լելեները ըրթունքին, — Հովաննիսյանի նաղելի կույսը բուրժուական ընատնիքի ճոխակենցաղ որիորդ ե, վոր յուր սալոնական ժամերն անց ե կացնում նույն շրջանի «պատահանիների անհոգ շրջանում», վորոնք «շուրջ պատած»՝ նրան «հաճոյանալ են ցանկանում»։ Այսպիսի պչրուհին իշարեկ չեր կարող զնահատել հոգեկան առավելությունները և կարեկցել կամ սիրել մի յերիտասարդ պոետի, վորը հասարակ միջավայրից եր։

Քեզ մոտեցա սեր հուսալով,  
Պայծառ դեմքիդ նայեցի,  
Յես—խավարած վշտի ամպով,  
Դու—արշալույս նազելի:

Յես ասացի. «Ինձ քույլ յեղիր,  
Յեղիր ընկեր ցավակից,  
Սերս, յերգս դու ընդունիր  
Նվեր տանջված մի սրտից:»

Բայց դու—զավակ փարթամության,  
Զհասկացար յերգս աղքատ,  
Դու—նույն անհոգ թռչնակ գարնան,  
Յես—նույն յերգիչն հուսահատ...

Բանաստեղծը դառն փորձով հասկացել է, վոր մին—  
չև անգամ սիրո հարցերում մասսայորեն վերցրած կե—  
ցությունն է վորոշում գիտակցությունը: Փարթամու—  
թյան զավակի կեցության հետեանք և նաև գիտակցու—  
թյունը նազելի կույսի, վորը չի հասկացել և գնահատել  
այս յերգերը, վորոնցից աղքատության հոտ և գալիս  
յեղել:

Շարունակությունը վազուց արդեն պատմել ե  
Պատկանյանը «Տիկին և նաժիշտ» վեպի մեջ.

«Աստուր աղայի յերեսը սպրանեցավ, մեռելի գույն—  
յեղավ. աչքերը արյուն կոխեց, ճակատը քրտինք տվալի:  
— Դու... Սոֆիային... դու... իմ, իմ, իմ  
Սոֆիային... իմ Սոֆիան քու կինը իլի՞... իմ Սո—  
ֆինկեն, աղա Աստուր Քեյթումալովի աղջիկը մեկ  
սալմաստեցի-խոյեցի կնիկ իլի՞ի՞... ա'տա, խելք-  
տանել ե՞ս տվել, թե՞ ինձ դիմ ես կարծըմ...»:

### XIII

Կնոջ ի՞նչ իդեալ ունի պոետը, այսինքն ի՞նչ տե—  
սակ կինն ենքա աչքում ամենաբարձրը: Այս կետը պատ—  
մականորեն ըմբռնելու համար մի փոքրիկ ակնարկ

Ճգենք և տեսնենք, թե մեր մեջ տարբեր գարաշրջաննե—  
րում կանացի ինչ տիպեր են կնոջ իդեալ համարվել:

Հայ ժողովրդական վեպի— «Սամա ծռերի»— մեջ  
կնոջ իդեալը Ծանդութ խանումն է (Հին հայոց հեթա—  
նոսական գիցուհի Անահիտ Տիկինը), վոր վոչ միայն  
հոգատար ամուսին և ու գթոտ մայր, այլև տոհմաներ  
կին ու առնասիրտ ուազմիկ, ինչպես Հայաստանի հին  
բնիկ ժողովուրդներից մեկի— ամազոնների (ամասյաց  
կամ մասյաց) կանայք եյին, ամազոնուհիները\*):

Միջին գարերում կնոջ իդեալը կրոնի համար նահա—  
տակվող կինն է, պատմագիր Յեղիշեյի փառապանծ  
«Փափկատուն տիկինները Հայոց աշխարհի, վորոնք մո—  
ռացան կանացի տկարությունը և հոգեոր պատերազմի  
մեջ առաքինի արուներ հանդիսացան»: Այս շրջանից իր—  
ու յերկրորդ որինակ հիշենք Կոմիտաս Աղցեցու հո—  
մերական ապագը Տրդատի գեմ պայքարող կույսի ու ըն—  
կերների մասին.

Թուլացան | կորովիք | հաստաձիգ | աղեղանց,  
Յեվ տկար | կանայքն | գառեցան | զինու.  
Թագավորն | պերձացյալ | զորոթւամբ | և փառոք  
ի մանուկ | ի կուսեն | պարտյան | ամաչեր:

Նորագարում հայ բուրժուական պոեզիան փառա—  
րանում և ազգասեր կնոջը: Այս պոեզիան մինչև անգամ  
Յեղիշեյի կրոնասեր կանանց նկարագիրը փոխում է «յուր  
պատկերի համաձայն» և Շահազիզի քնարով նրանց գո—  
վերդում իրքեւ ազգասեր կանանց: Յերիտասարդ Ռաֆ—  
ֆին «Սալլրու» մեջ մի վոտանալորում տալիս և պարս—  
կահայ կնոջ յերկու տիպ՝ պարզ մատնանշելով, թե  
սրանցից վորին և դերագասում, իրքեւ հայ կնոջ իդեալ.

\*.) Հմմտ. Ամասյա անձնանունն ու սրա հետ կապված Մա—  
տիք-Մասյաց-Մասիս տեղանունը:

Քնքու յը ձեռները հարեմին սիրուն  
Հինան ներկում ե վարդագույն կարմիր-  
Նա այդ ձեռքերով հրապուրել գիտե-  
Ամուսին խոնը ջերմ, հեշտախնդիր:

Բայց յես սիրում եմ արյունով ներկված  
Նորը մատիկները իմ սիրուհին,  
Յերբ փորնա ինձ հետ պատերազմում ե  
Վոսուիների գեմ իմ անբախտ ազգիս:

Հովհաննիսյանը չունի Ռաֆֆու ոազմիկ հոգին,  
Բայց ըստ եյտթյան իղեալական կոնջ նույն տիպն ե զո-  
վարանում, ինչ վոր Ռաֆֆին, Շահազիզն ու մյուսնե-  
րը: Նա ել ե վագեորդում հարդ դարի հայ «ազգասեր»  
կանանցով.

Փափկասուն կանայք, նազելի կուսան  
Ծքեղ մազերից վիրակապ հյուսած,  
Հեղ ձակատներին վեհ սիրո նշան՝  
Դաշտ են շտապում պաճուճանք մոռցած:

Նրա ել իղեալն այն կինն ե, վոր մտահոգված ե յուր  
Հայրենիքի թշվառ կացությամբ: Այս պարզ յերեսում ե  
մանավանդ նրա այն վոտանավորի մեջ, վոր գրված ե  
Շահազիզի «Ինձ մի սիրիր» ու Նազոսի «Ո՞ւ եօթ յ ԵՅՌ»  
բանաստեղծությունների ազգեցության տակ.

Յես քեզ սիրեցի, բայց չեմ կամենում  
Տալ սիրոս, հոգյակ, քեզ բնավ գերել—  
Մի անկյուն նորա անմեկին խորքում  
Ալ սիրո համար յես կամիմ պահել:

Տես, թշվառության հազարալեզու  
Բոցը բորբոքված խնդրում ե զոհեր,  
Տես, այնտեղ խոնած իրար մոտ ահու  
Վերջին են սպասում քանի՛ անբախտներ...

Յեկ դոցա համար յես սեր եմ պահում,  
Այդ ձակատագրի խոըթ վորդոց համար,  
Վորոնց առաջին դուռը չե բանում  
Միիթարության՝ քարասիրո աշխարչ...

Տուր ինձ, սիրելիս, և քո սերն անբիծ  
Այս հառաջանքի հովիտը տանեմ.  
Գուցե արցունքը ցաված աչքերից,  
Մաշված ձակատից թախիծը խլեմ:

Հովհաննիսյանի յերգած հայ իղեալական կինը,  
Ճիշտ ե, չունի և կարող ե չունենալ «արյունով ներկած  
նուրը մատիկներ» և չպատերազմել «ազգի վոսոյների  
ղեմ», բայց նա ունի և պետք ե ունենա կին քաղաքացու  
գիտակցություն ու կարեկից սիրտ հանդես գալու «հա-  
ռաջանքի հովտում» իբրև կուլտուրական մշակ ու գթու-  
թյան քույր բառիս ամենալայն առումով\*):

#### XIV

Մեղ մնում ե շոշափել մի հիմնական հարց ել, այն է  
թե դասակարգային հասարակության սոցիալական  
կյանքի եական հատկանիշը, անտեսական ու հանրային

\*) Հայ զբականության նորագույն շրջանում, բանվորական  
պոեզիայի մեջ հրապարակ ե դալիս հայ իղեալական կոնջ մի  
բոլորովին նոր տիպ: Հակոբ Հակոբյանը «Եոր առավոտ» պոե-  
մայի մեջ հնչեցնում ե զործարանի ու սոցիալիզմի զաղափարով  
սոցորված կոնջ սիրերը.

Յեթե իրավ ե, նազելի սիրուն,  
Վոր քո աշերը ջերմ կյանքի կարոտ  
Մի նոր իրական աշխարհ են վնասում  
Յեկ ինձ խոստանում կյանքի առավոտ,  
Արի առնեմ քեզ իմ սիրածի մոտ—  
Դեպի զործարան  
Արի առնեմ քեզ...

անհավասարությունը կամ ավելի ձիշտր՝ հակամարտությունն ինչ արձագանք է գտել Հովհաննիսյանի բանաստեղծությունների մեջ:

Պետք ե ասել, վոր հայ պոեզիայի մեջ սոցիալական անհավասարության ու դասակարգային հակամարտության յերեւյթը քիչ անգամ ե յերգինյութ դառել, բայց այդպիսին դառնալիս՝ բավական ուժգին լողոքի շեշտովի ե արձանագրվել: Այս կարգի գրգածքներից հիշատակելու արժանի յեն 13—14 դարի տաղերդու Ֆրիկի «Գանգաւար», Խափայել Պատկանյանի «Գանգաւարիուն», Թերզյանի «Առ մայրն իմ», Ռաֆֆու «Ասոված իմ, ասոված, բարերար ասոված» վոտանավորը (ապօպած ե «Սալբու» մերջում), Դուրյանի «Միքացեք ըզմիմիանս» ու Աղայանի «Զմեռ»:

Ֆրիկի, Պատկանյանի, Թերզյանի, Ռաֆֆու, Դուրյանի ու Աղայանի նման Հովհաննիսյանն ել յուր յերգերում լսելի յե գարձնում սոցիալական ծայրահեղ անհավասարության իրողությունը:

Հովհաննիսյանը Ֆրիկի ու Ռաֆֆու պես յուր խոսքըն ուղղում է անմիջապես տառծուն:

Բայց մարդիկ վազուց մոսցած քո խրատ  
Դահիճ են դարձել յեղարցն հարազատ.  
Ռւրացած անմահ խոսքը մարդասեր՝  
Հզորն աշխարհին դարձել ե արդ տեր,  
Յեվ փոքրը չունի այլևս բերան  
Կարդալ սաղմոսը քա որհներգության:

Այն խոսքերում, վոր հեղինակն ուղղում է քաղաքացի պոետին, նկարագրված է անհավասարության նույն իրողությունը, և այս նկարագրության մեջ շեշտը գրիտծ է անտեսական կողմի վրա.

Ճենում ես չուրջլ կարիք ու դրկանք  
Յեվ սորկության ճնշող շղթաներ,  
Յեղրաբդ կյանքից չուսած զգվանք  
Վաղ ճաշակել են հոգեմաշ ցավեր:

Մարգկանց մի խումբը գահիճ ե, մյուսները՝ զոհեր: Հզորն աշխարհի տերն ե, իսկ վոքքը ծպտունի իրավունք չունի: Շուրջն ամենուրեք կարիք ե, զրկանք, շղթա ու ցավեր: Այսպիսով զորս ե գալիս, վոր անհավասարությունը, հակամարտությունը, հարստացարությունն ու աստապանքը, վոր պոետը նկատում եր միայն տարբեր ազգությունների արտաքին հարաբերությունների շրջանում, միջազգային ասպարեզում, տեսանելի յեն նաև հասարակությունների ներքին կյանքում, ներազգային իրականության մեջ ել: Շահերի այս բախումը կա

Յեվ այս կովի մեջ ահեղ, սոսկալի,

Ուր վոր զրկվածը նենդավոր բախսից

Անհետանում ե, վորպես մի ճրճի՝

Հաղթված վոսկեզոծ յերկաթի բազկից,

Ուր միայն մեկի ծառն յեղանկության  
Բուսնում ե տասի ավերակներից,

Ուր մի ժպիտը ծաղկում ե միայն

Հարյուրագորի աղի արցունքից:

Մասնավոր սեփականության վրա հաստատված հասարակությունների մի սպանիչ բնութագիր ե այս, վոր վոչ միայն հավասառում և սոցիալական հակամարտությունների ու անտեսական անհավասարության իրողությունը, այլ յերեւյթները կշռի հակադիր թաթերի մեջ են, դնում և մատնանշում, թե որանցից մեկի իջնելն ե, վոր բարձրացնում է մյուս թաթը, և բնդ հակառակը:

Ուրե՞մն:

Ի՞նչ պետք է անել այս դեպքում:

Ի՞նչ չույս կա,

Թե կցոմքի զառն արտասուք,

Լոյս կդառնա այս սև գիշեր,

Կփարատավին կսկիճ ու սուզ,

Կլա մայիս չնորհարեր:

Նախ տեսնենք, թե ում կողմն ե բանաստեղծի համակրությունը—վոսկեղոծ յերկաթե բազուկների<sup>օ</sup>, սահավաթիվ ժպտացող յերջանիկների<sup>օ</sup>, թե՞ն նենդավոր բախտից զրկվածների, աղի արցունք թափող բազմությունների:

Դրեթե դեռ պատանի, կյանքի գործունեյության չեմքը դեռ վոտ չդրած՝ 19 տարեկան պոետը յուր առջեւ տեսնում ե յերկու ճանապարհ՝ մեկը տանում և դեպի բարոր ու անդորր կյանք, իսկ մյուսը՝ դեպի անդուլ աշխատանք, կատաղի պայքար ու գառն զրկանք։ Այս վերջինում արդեն չկան «կանաչ պուրակ», «թունոց մեղեդի», «աչագեղ կույս»։—

Վոչ, արյուն արցունք, լքյալ հառաչանք,  
Անտեր ամբոխի անվերջ տառապանք,  
Արդար վաստակով մշտկած գետին  
Ավարի մատնած—ահա իմ բաժին։

Յերկու ասպարեզի այս հեռանկարներին աչքը հառած՝ պատանի պոետը տարակուում է և անկեղծորեն արտահայտում յուր տառանումը։

Յեվ յես կանգնած եմ և խոր մտածում.  
Կյանք, ինձ յերկուսից վո՞րն ես պատրաստում։

Բայց չամ ժամանակ չի անցնում, և ահա յերիտասարդ բանաստեղծի յերգերում դտնում ենք որհասական վիճոր։

Բայց վոչ, չկամիմ գլուխ խոնարհել  
Արյունով կանգնած մեծափայլ կուռքին  
Յեվ վոչ կարող ե իմ սիրուը զբավել  
Շլացնող փառքի վշահյուս դափնին։

Իմ հոգու ձայնին յես հավատում եմ,  
Յեվ աղքատության և յերգի համար  
Յես իմ գրոշակն ահա պարզում եմ,  
Յեվ այսուհետեւ հավատոս պայծառ։

Սրան հետեւում ե պոետի սիրուն դեկլարացիան,  
կորը թեկ վորոշ անորոշություն և պարունակում,  
բայց այնուամենայնիվ խիստ պարզ և յերկրնտրանքի լուծման տեսակետից։

Մնաք բարեւ, արեւ, դարուն,  
Յեվ խնկարույր ծաղիկներ,  
Կարկաչահոս վտակ սիրուն,  
Կանաչազգեստ բլուրներ։

Մնաք բարյավ, համբույր և սեր,  
Դեմքով հրեշտակ կույս չքնաղ,  
Վայելչության պայծառ ժամեր,  
Քաղցր ժպիտ, կյանք մատաղ։

Աղքատություն յես սիրեցի,  
Խեղճի կացը, հառաչանք  
Յեվ քնարս նվիրեցի  
Վիշտ յերգելու և տանջանք։

Պոետի դիրքն ակներև է։ Նա ուզում է խեղճերի,  
աղքատությի դատի պաշտպան կանգնել։  
Բայց ի՞նչպես, — ահա հարցերի հարցը, վոր  
պետք է վճռել։

Իրականության ամենաժիտական, ամենից արմատական գնահատությունն անպամ հաշմանում է, յերբ սրան չի հետեւում դործնական թելադրանք իրականությունը փոփոխելու մասին։

Արդ, ի՞նչ ե առաջարկում Հովհաննիսյանի պոետիան սոցիալական խոցերը դարմանելու, տնտեսական հակամարտությունները չքացնելու և աղքատությունն ու տառապանքը վերացնելու համար։

ինչպես վոր արևապաշտ յեզդին արևի ձեր, չըջուկիծը, սրբազնն, նվիրական ձեւ համարելով՝ չի հանդըգնում սրբապղծել, տրորել, շենքել ու դուրս գալ յուր չորս բոլորը բացած խազից, վոր բառի բուն մտքով կախարդական շրջանակ են նրա համար, այնպես ել Հռվ-Հաննիսյանի մուսան չի խիզախում նայելու մասնավոր սեփականության սահմաններից այն կողմբ։ Քաղաքատնտեսական տերմինով վորակելով պետք ե առենք, վոր նրա վոտանավորներն ել բանաստեղծական արտահայտություններն են այն հումանիտար, մարդասեր դպրոցի հոգերանության, «վորը սրտին մոտ ե բնդունում գոյություն ունեցող արտադրական հարարերությունների վատ կողմբ», «աշխատում ե խիզճր հանգստացնելու համար թեկուզ մի քիչ մեղմացնել իրական հակադրությունները», «ժխտում ե հակամարտության ոնչ բաժեշտությունը» և «ցանկանում ե բոլոր մարդկանց բուրժուացնել» (Կարլ Մարքս)։ Հովհաննիսյանը չի կարողանում հասուլ լինել սոցիալական հակասությունների ու տնտեսական հակամարտությունների մերացման այն արժատական ձարին, վոր ե՝ հենց վոսկեկոծ յերկաթե բազուկների խորտակմամբ հանրային արտադրության կազմակերպումը նենդավոր բախտից զըկփածների միջոցով։ Ես չի կարողանում նշմարել մասնատիրական գույքային հարաբերությունների շրջանակները ջարդություն անելու անառարկելի անհրաժեշտությունը, ուստի ե զաղված թշվառների ձեռքի տարիս և մի թրշվառ զեղատոմս, վոր հազարամյակների խունացած ու անապեցիկ վաղեմություն ունի։

Այս գեղատոմմի անունն է քրիստոնեական ուրբ ու ավետարանական հաշտություն։ Հայ պոեզիայի պատմության մեջ այս առաջարկը նորություն չեր անցուցաւ։ Հիշտակենք այս կարգի մի նշանավոր նախադեպ, վորր թեև ոչազգրություն չե արժանացել մինչեւ որս, բայց

մեր հոնքային մտքի պատմոթյան համար շատ լավ ընդունելու:

Հովհաննիսյանից մոտ կես զար առաջ Ալիշանը  
1849 թվականին գրած մի կուռ վոտանավորում\*) ցա-  
վով ու զայրույթով նկարագրելով 1848 թվականի հե-  
ղափոխական շարժումներն ու քաղաքական փոթորկող  
իրադարձությունները և այս բոլորին տալով բացա-  
սական գնահատություն՝ սրանց պատճառը համարում եր  
քրիստոնեական կրօնի թուլանալը, ուստի և կոչ եր ա-  
նում աստծուն, վոր սա վերջ տա յերկնային խոալա-  
կան գործադուլին, թողնի ականատեսի դերը, ակտիվ  
միջամտի Յելրոպայի գործերին և վերահստատի խա-  
ղաղությունը համաշխարհում:

ինչպես անկասկած ցույց են տալիս Հովհաննիսյանի  
մի շարք վոտանավորները, նա ել սոցիալական ծովի  
փոթորկի գոռ ալիքներն Ալիշանի նման ուղղում ե իջեց-  
նելու հանդարսեցնել քրիստոնեական սիրո յուղը թա-  
փելով խռովահույզ կը բերի վրա\*):

Հայ հանրային մտքի զարգացումն ու սրան զուգընթաց հասակ առնող հայ նորագույն պոեզիան չը կնացին նրա նշած ճանապարհով։

Հովհաննիսյանից մոտ մի տասնամյակ հետո զբա-

<sup>\*)</sup> «Ավաղը», Բ. Պլատի, Վեհեմիկ 1885, էջ 111-116, «Խաղաղության ձևին Հայեացի» վերնագրով:

\*) Դժբախտաբար կարելի յէ ասել ավելին եւ: Հովհաննիս յանը յուր բանաստեղծությունների մեջ մեծ տեղ եր հատկացնուած նաև հայ յեկեղեցուն ու մահալանդ Եջմիածնին: Եւ ավելի ազգիւով կղերական մթնոլորտից, վորք նրան խրախուսում էր մայրավանքի լառերեատը դառնալու, և հետեւ յով Առաքել Բաղրիչեցուն, Սիմեոն Յերևանցուն, Միսկին Բուրջուն, Աշուղ Ղաղարին, Քիչիկ Նովային, Ղալամ Աղլուն, Աշուղ Քյանձանին, Քաղաքին, Քիչիկ Նովային, Ղալամ Աղլուն, Աշուղ Քյանձանին, Քեշիչ Աղլուն ու Զիվանուն՝ նա կրոնական բազմաթիվ վոստնավորների շարքում հորինում եր նաև Եջմիածնի հայոնի զովքը.

կան հրապարակ վոտք գրեց արևելահայ անդրանիկ բանաստեղծը, վոր չի աղօքում, անկրոն պոետը — Ավետիք Իսահակյանը:

Իսկ 20-րդ դարի առաջին տասնամյակում արդեն զողանջում ելին խիզախ յերգերը հայ բանվորական գրականության հիմնադիրներից մեկի՝ բանաստեղծուհի Շուշանիկ Կորդինյանի, վոր քրիստոնեյության սոցիալական սկզբունքների ու հավատալիքների դեմ ծառացած աղաղակում եր զայրույթով.

Հետ տար քո խաչը... Հետ տար մոլեռանդ  
Կեղեքիչների գենքը քառաթեվ,  
Վոր պաշտվեց յերկար, յերր ամեն անգամ  
Տնքում եր մարդը մտքով կուցը, անթե՛...  
Հետ տար... նրանից արյուն ե ծորում,  
Վազում արցունքի, շարավի հեղեղ,  
Բյուրավոր անթիվ զոհերի լքում—  
Ղողանջում մահվան նզովքով ահեղ...

## XVII

Սակայն բարերախտաբար Հովհաննիսյանի սերը միշտ քարացած, անշարժ չի մնում, այլ զարդանալով յերեմն գառնում է վոչ-սեր:

Խափարի մեջ դու վառվեցար, վորպես կանթեղ,  
Վառ պահեցիր մեր սրտերում կայծն յերկնային,  
Անփառունակ սորուկ յերկրի դու լուսաղեղ  
Անչեջ փարսս աղառության, Եջմիածին:

Այս գիծը իդեոլոգիապես չեր բափարարի վոչ միայն պողիկյանին կամ թռնրակեցուն, վոչ միայն Նալբանդյանին, կամ Թոխմախյանին, այլև Ռաֆֆուն (Հմմտ. զաղափարական ավազակներ Քիթար-Դալբու և Դալի-Բարայի ճառերը «Զալալեղ-գինի» մեջ), մինչեւ անգամ Պեշիկթաշլյանին (Հմմտ. սրա «Յեղբայր Եմք մեղք») ու Պատկանյանին (Հմմտ. սրա «Տաճկահայեր որհաս»):

«Կոիվն ե բոլոր իրերի ու յերկույթների հայրն ու թագավորը», — ասել ե հելլեն փիլիսոփան, Հերակլիտ Մթինը:

Հովհաննիսյանը մտածողության ու վոգեորության ամենապայծառ բոպեներում մեկ-մեկ գիտակցում և այս ճշմարիտ ու ահեղ խոսքի վսեմ նշանակությունը: Դեն նետելով լծարեր սիրո քարոզչի սևաթույր պարեգուր՝ նա կայտալով հազնում ե լծակործան ատելության յերգչի արյունավառ ծիրանին՝ այս անգամ արդեն հարելով վոչ թե պատրե Ալիշանին, այլ իմաստուն պատանի Դուրյանին ու փորձառու զինվոր Պատկանյանին:

Սրանցից Դուրյանին ե պատկանում այն սարկաստիկ միտքը, թե քրիստոնեյության հիմնական պատվիրանը՝ «սիրեցեք միմիանց»— հենց Գողգոթայի ժայռերի մեջ ել մարեց և չքացավ հավիտյան: Դուրյանին են այն ազգեցիկ առղերը, վորտեղ նա նկարագրելով սոցիալական ահռելի հակառությունները, հարստի ու աղքատի ապրուստի ու վախճանի անդնդային տարբերությունը՝ հանճարեղորեն ու հերձվածողարար յեղբակացնում ե.

Կայծակնաթե թե մոնչեն նոճիներ,  
Թե «սիրեցեք զիրար»— հեքն հոս չե՞ն սիրեր:

Իսկ Պատկանյանը, վորի տարերքը կոիվն եր, շատ լավ եր հասկանում, թե չարագործներին չի կարելի ընկճել մեղմությամբ: Սերը հաշտության ու հնագանդության նախադուռն է: Խեղճերի ու զրկվածների որակարգի մեջ պետք ե գնել ատելությունը, վոր առաջնորդում ե դեպի լմբոստություն ու քաջարի մարտ: Վոչ թե վերացական, համատարած սեր, այլ կոնկրետ, գեալեկտիկական սեր, վոր ատելությունը չի ժխտում, այլ ընդ հակառակը, իրախոսում ե իրեւ հրամայական

պարտականություն։ Վոչ թե սեր-սեր, այլ սեր-ա-  
տելություն։ Այս մտայնությամբ Պատկանյանը գրում  
է յուր հոչակալոր յերկառողը.

Սիրել գիտես, գիտցի՛ր, գիտցի՛ր դու տոել,  
ինչ վոր հոգիդ վկայում ե տոելի։

Հոգհաննիսյանի դեռ անդրանիկ վոտանավորնե-  
րում, թեև թույլ, բայց այնուամենայնիվ նկատելի յեն  
տաելության հուսատու սաղմեր.

Յերանի նրան, վոր տեր ե ազատ  
Յուր զգացմունքներին—սիրել ե տոել,  
Կարող ե սերը վողջունել ժպտով  
Յեվ նախատելով մերժել անդութին։

Կյանքի փորձը բանաստեղծին որեցոր համոզում ե,  
վոր սիրո սրնգով անհնարին ե թովել չարաթույն իժե-  
րին ու գոհակուլ վիշապներին, այլ անհրաժեշտ ե նրանց  
արյունամած յերախների դեմ շեշտակի կարկառել հե-  
րոսական կովի բոցավառ խանձողը։

«Կոիվ ե այս կյանքն»,— ազդարարում ե պոետն  
զգաստացած։—

Յեվ քանի վառ ե, չե հանդել կրակ,  
Հառա՞ջ, միշտ հառա՞ջ, ընկեր թանկադին,  
Կյանքն իրեն հեղեղ կոհակ առ կոհակ  
Շարժվում ե, փրկում միայն քաջերին։

Յեվ բանաստեղծը, վոր վողեռվում եր միջնա-  
դարի իդեալով, Գողգոթայի հուր խաչեցյալով, հիմա-  
աչքերն ուղղում ե հեթանոսական հնադարի իդեալին,  
դեպի կովկասյան լեռները, վորոնց ծերպերի մեջ ուր-  
գագծվում ե վեհափառ կերպարանքն ըմբոստ տիտանի,  
Պրոմեթեոսի, վոր ընդվզել եր վոչ թե աննշան տիրա-  
նիկների դեմ, այլ տիեզերական բռնակալի—վոյիմպա-  
գահ ու ամպրոպազեն Զեվսի դեմ։—

Մառայամիտ սպասարկուներդ աթոռիդ  
Հայր և արքա տան, ով Զեվսո, քեզ անուն,  
Թող քո առաջ առատ կնդրուկ միշտ ծիեն,—  
Զե՛ ահոելի քո զորությունն ինձ համար...  
Բայց դու գիտցիր, կործանելով իմ մարմին՝  
Յերբեք իմ գործն ել սպանել չես կարող.  
Մարդկանց աչերն յես բաց արի, տվի լույս  
Նոցա խավար ստրկացած խեղճ մտքին.  
Յեվ կտեսնես, վոր կդա որ, և նոքա,  
Վոր սարսափում, դողում ելին առաջիդ,  
Կծանակեն հպարտությամբ քո շանթեր  
Յեվ կիմանան, վոր ամպերով միշտ ծածկված  
Գահդ անառակ պիղծ վորջի մեջ ե կանգնած։  
Որը կդա, կխորտակվի վոլիմպոս,  
Յեվ լուսավոր յերկնքի տակ թև առած  
Կսավառնի ազատության վեհ հոգին։

Հայանի յե, թե մարդկության նորագույն պատմու-  
թյան հանճարներից մեկը— Մարքսը, բուրժուական  
Զեվսի դեմ ծառացած այս նոր տիտանը—վորքան եր  
վոզեռվում Պրոմեթեոսի յերգչով, Եսքիլոսով\*) և  
ընդհակառակը խարազանում քրիստոնեյության գա-  
ղափարները։

«Քրիստոնեյության սոցիալական սկզբունքները, —  
ասում եր նա, — արդարացնում ելին անտիկ աշխարհի  
ստրկությունը, փառաբանում ելին միջնադարյան ճոր-  
տատիրությունը և հարկ յեղած դեպքում կարող են,  
թեկուզ և խղճուկ ծամառություններով, պաշտպանել  
պրոլետարիատի արդի հարստահարությունը։ Քրիստո-  
պոլետարիատի սոցիալական սկզբունքները փառարանում են  
յերկուլածությունը, ինքնարհամարհանքը, ինքնանը-  
յերկուլածությունը, հեղությունը, մի իսոս-  
վաստացումը, հպատակումը, հատկությունները խուժանի. այն ինչ պրո-  
քով, բոլոր հատկությունները խուժանի։

\*) Պոլ Լաֆարգի ու Ֆրանց Մերինգի ասելով՝ նա ամեն  
տարի նորից ու նորից կարդում եր Եսքիլոսի հունացեն սկզբնա-  
գերը։

լետարիատի համար, վորը չի դանկանում, վար յաւր հետ  
վարվեն, ինչպես մարդկության թափթփուկի հետ,  
պրոլետարիատի համար համարձակությունը, ինքնա-  
գիտակցությունը, հպարտության ու անկախության  
զգացմունքն ավելի կարևոր են, քան հացը»:

Պրոլետարիների աչքում, նրանց աշքում, վորոնց  
համար համարձակությունը, ինքնազիտակցությունը,  
հպարտության ու անկախության զգացմունքն ավելի  
կարևոր են, քան փորախորչը տազեցնող լափը, — նրանց  
աչքում, իրենց մեծ ուսուցչի սպորտեցրածի ու հորդորա-  
ծի համաձայն, անշուշտ մեծ արժեք ունեն և կունենան  
թե՛ այն գաղափարական տիպերը, վորոնք սրբազն  
ատելության աննկուն մարտիկ են յեղել անցյալում, և  
թե այն գրվածքները նախորդ շրջաններից, վորոնք  
տոգորված են ազատարար լմբաստության վորով:

Հույն պոետի ավյունից վարակված Հովհաննիս-  
յանի «Պրոմեթեվս» մենախոսությունն ու հանուն իդեա-  
լի գրված նրա մի քանի վոգեպնդիչ բանաստեղծություն-  
ները համամարդկային այն վսեմ յերկերից են հենց,  
վորոնք անդուրըատյաց ու մըրթկախինդ արիներին նշում  
և քաշում են դեպի մարտական իդեալի այն լուսավառ  
ու արեամուտ բարձունքները, վոր այնքան հմայիչ  
յերգել ե չքնաղաձիր պոետը՝ դալիքի նոստալգիան  
սրտում.

Ավելի՝ կարծրանան թող այս սև ժայռեր,  
Ավելի՝ թող սպառնա անդունդն ահափոր,  
Դեռ չունչ կա բերանումս, շարժվում են ձեռքեր,  
Դեպի վե՛ր, սարն ի վե՛ր, ով արի՝ զինվոր:

Դեռ Հեռու յե կատարի անամպ ու հստակ,  
Բայց յեթե չհամենք այնտեղ մենք այսոր,  
Վաղն այնտեղ ենք անցուատ, մերն ե հաղթանակ,  
Դեպի վե՛ր, ամըն ի վե՛ր, անվեհե՛ր զինվոր:

1931 թ. հունվար, Յերկանէ  
Վերանայված և 1934 թ. սպառառի 31-ին:

## ԲԱԴ. ԱՎԴԱԼԲԵԳՅԱՆԻ

ՏՊԱԳՐՎԱԾ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

## І ПУСТЯКОВОЕ ОБЩЕСТВО

Ա. ՀԱՅԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ - ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ

1. Միջավայրի քեռիան («Գեղարվեստ» հանդես, Թիֆլիս, 1909, № 3).
  2. Կարլ Մարքսի տեսեսական գարգացման քեռիան Ա. տպագրություն, Երևան, 1925, Բ. տպագրություն, Երևան, 1926.
  3. Золото в схемах простого воспроизводства. Эривань, 1929
  4. Издержки обращения в схемах простого воспроизводства. Эривань, 1930,
  5. К вопросу о золоте в схемах простого воспроизводства. Эривань, 1930,
  6. «Վուկին պարզ վերարտության սխեմաներում» գրքույկի մասին. պատասխան Վ. Պողոյակովին («Նորույն» ամսագիր, Երևան, 1929, № 11—12).
  7. Основные схемы расширенного воспроизводства. Эривань, 1931,
  8. Развернутая схематическая таблица простого воспроизводства социалистического хозяйства. Эривань, 1931.
  - Բ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԿՈՒՑՈՒՐԱՅԻ ՈՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
  9. Նոր Բայազիրի նորագույն սեպագիրն ու նրա հետգիտական միջավայրը. Երևան, 1927.
  10. Յերկու եջ Հայաստանի փոռոգման պատմությունից ու նրանց գործնական հետևանքները. I. Նորագույն առուն, II. Գավառական առուն. Երևան, 1927.

11. Նոր Բայազդի հին առումներն ու շրջակայքի վռագման հի-  
ռանկարները. Յերևան, 1931.
12. Հայ շինականի ու գեղջկուհու աշխատավարձը հինգերորդ  
դարւում («Տեղեկագիր Գիտության և Արվեստի  
Ինստիտուտի», Յերևան, 1928, № 3).
13. Հաս, սակ ու բաժ. Հայաստանի տնտեսական զարգացման  
խնդիրների չուրջը. Յերևան, 1926.
14. Մի գաղտնիք հայ վիմական արձանագրությունների մեջ ու  
նրա նշանակությունը Հայաստանի տնտեսական  
զարգացման պատմության համար. Յերևան,  
1927.
15. Բահրան ու մյուլքը XVII ու XVIII դարերում («Նորք» հան-  
գես, Յերևան, 1923, Բ. գիրք).
16. Յերկրագործական հավելյալ արդյունիքի նորման XVII ու  
XVIII դարերում ու XIX-ի սկիզբներում «Նորք»  
հանգես, Յերևան, 1923, Գ. գիրք).
17. Հայաստանում բամբակագործությունը վերականգնելու և  
բնդլայնելու հետամյա պլան 1924—1929 թ. թ.  
(«Վերելք» հանգես, Յերևան, 1924, № 4—5):
- Գ. ՀԱՅ ՀԱՆՐԱՅԻՆ ՄՏՏԲԻ ՈՒ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
18. Միհրը հայոց մեջ. Վիճնա, 1929.
19. Անհայտ աղանդավորներ հայոց մեջ XVI ու XVII դարերում.  
Վիճնա, 1926.
20. Հայ աղատագրական շարժման յերկու հոսանք XVIII դարի  
վերջերում. («Նորք» հանգես, Յերևան, 1922,  
Ա. գիրք).
21. Շահամիք Շահոմիքյանի ու հնդկահայոց համայնական ինք-  
նավարությունը XVIII դարում. («Տեղեկագիր  
Գիտության և Արվեստի Ինստիտուտի», Յերե-  
վան, 1930, № 4).
22. Ֆրանսական մեծ հեղափոխությունն ու ժամանակակից հա-  
յերը. («Նորք» հանգես, Յերեվան, 1924,  
Դ. գիրք).

23. Առաջին գաղափարական աւագակը հայոց մեջ. Մերկեկու-  
լարի Տեր-Մղրախ. 1791—1792 թ. թ. (տպա-  
գրված և իրրև հավելված «Արսեն Թոխմախ-  
յանի»).
24. Հայ անդրամիկ պարբերական ու նրա խմբագիրը («Վերելք»  
հանգես, Յերեվան, 1924 № 2—3).
25. Խաչատուր Արովյան. գրական-պատմական վերլուծություն,  
Վաղարշապատ, 1910.
26. Միքայել Նալբանդյան. գրական-պատմական վերլուծու-  
թյուն, Ա. տպ. Վաղարշապատ, 1913, Բ. տպ.  
Յերեվան, 1928.
27. Մերկանտելիզմը հայոց մեջ («Հորիզոն» որաթերթ, Թիֆլիս,  
1913, № № 268 ու 269).
28. Համբույցի լուծումը. Միքայել Նալբանդյանի աշխարհահա-  
յացքի բնորոշման խնդրի չուրջը («Հորիզոն»  
որաթերթ, Թիֆլիս, 1914, № 6, 10,  
16 ու 21).
29. Արսեն Թոխմախյան. գրական-պատմական ակնարկ, Յերե-  
վան, 1926.
30. Շիրվանգաղյի վեպերի նյութը («Արարատ» ամսագիր, Վա-  
ղարշապատ, 1910, № № 4 ու 5).
31. Հովհաննիս Հովհաննիսյան. գրական-պատմական վերլուծու-  
թյուն, Յերեվան, 1934.
32. Հողի վիշտը Մուրացանի յերկերում. գրական-պատմական  
վերլուծություն, Վաղարշապատ, 1911.
33. Հայ գյուղը Հովհաննիս Թոխմախյանի յերկերում. գրական-  
պատմական ակնարկ, Յերեվան, 1924:
- Գ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ-ԲԱՌԱՐԱՆԱԳՐԱԿԱՆ
34. Գրասերի որագրից. ա. Մեհրուժան Արծրունու զայրույթը.  
բ. Նորից կորյունը Վրաստանի եպիսկոպոս չե-  
յեղել. գ. Կունդ Արամազդ. դ. Կողմն Սեպհա-  
կան գնդին = Վասպուրական. ե. Յերեվանը  
Մերեսուի «Պատմության» մեջ. (տպագրված և  
իրրև հավելված «Անհայտ աղանդավորներ»  
գրքույթի).

35. Կարծեցյալ Շաղունիք - «Պատմութիւն Շաղհոյ թագրաստութ-  
ւոյ» գրքի Հեղինակը վորոշելու խնդրի շուրջը  
(«Բանբեր Հայաստանի Գիտական ինստիտուտի»  
գիրք Ա.-Բ. Վաղարշապատ, 1921—1922).

36. Միմեռն Կարունիկոսի հիշատակարանի ծածկագիրը («Բան-  
բեր Հայաստանի Գիտական ինստիտուտի», գիրք  
Ա.-Բ. Վաղարշապատ, 1921—1922).

37. «Կոմմունիստական Մանիքեստի» հայերեն թարգմանու-  
թյունները 1887-ից մինչև 1924 թ. («Վերելք»  
հանդես, Յերեվան, 1924, № 4—5).

38. Իուս-հայերեն տնտեսագիտական տերմինարանական քառ-  
տետր (տպագրված և իրեն հայելված Տյումե-  
նեվի «Աշխատանքի պատմության» հայերեն  
թարգմանության Ա.-Բ. ու Գ. հրատարակու-  
թյան մեջ).

39. Իուս-Հայերեն նոր Բառարան Ա. Հատոր, Ա-Հ. (Պ. Սոս-  
նիկյանի, Յե. Տեր-Մինասյանի ու Վ. Փոթե-  
յանի հետ միասին), Յերեվան, 1933 (Բ. Հատո-  
րը, Օ-Յ, մամուլի տակ է):

## II Խ Մ Բ Ս. Գ Ր Ա Վ Ո Ւ Թ

40. Կարլ Մարքս «Վարու աշխատանիք ու կապիտալ». թարգմ.  
Սու. Շահումյանի, Բ. տպ. Յերեվան, 1921  
(Պետհրատի անդրանիկ, № 1 հրատարակու-  
թյունը).

41. Իուս-հայերեն իրավաբանական բառարան (Հ. Աձառյանի ու  
Հովհ. Հովհաննիսյանի հետ միասին), Յերե-  
վան, 1924.

42. Իուս-հայերեն աշխատանիքային բառարան Վ. Փոքեյանի  
(իսմբ. Յե. Տեր-Մինասյանի ու Վ. Փոթեյանի  
հետ միասին), Յերեվան, 1931.

43. Հակոբ Պարոնյան «Յերկերի լիակատար ժողովածու» Ա. հա-  
տոր (Մ. Աբեղյանի, Գ. Լեռյանի, Յ. Խան-  
զագյանի ու Ա. Տերտերյանի հետ միասին), Յե-  
րեվան, 1931:

## III. Թ Ա Ր Գ Մ Ա Ն Ա Կ Ա Խ

44. Ա. Խոայի «Անհանու ու միջավայրը—Հիսուս, Դարձին ու  
Մարքս» («Մուրճ» ամսագիր, 1907, № 4,  
ապրիլ).

45. Քերդնիկով և Սվետով «Քաղաքական գրագիտության դաս-  
ընթաց», Ա. Թաս, Յերեվան, 1926.

46. Ա. Տյումենն «Աշխատանիքի պատմություն», Ա. Առաք. Յե-  
րեվան, 1924, Բ. տպ. Լենինական, 1925,  
Գ. տպ. Յերեվան, 1927.

47. Ֆ. Միխարկանի «Քաղաքատնեսություն», Յերեվան, 1928.

48. «Հայաստանի ավտոնոմիան» և Անտանտան. Վաշերագրեր  
իմպերիալիստական պատերազմի շրջանից. Յե-  
րեվան, 1926.

49. Ա. Դեբորին «Մարքսիզմը, Լենինն ու կուստուրան» («Վե-  
րելք» հանդես, Յերեվան, 1924, № 4—5).

50. Ն. Լենին «Պարենհարկի մասին», Վաշերագրատ, 1922.

51. Վ. Ի. Լենին «Սոցիալիստական հեղափոխությունը և լու-  
սավորության խնդիրները», Յերեվան, 1925.

52. Վ. Ի. Լենին «Խմակիալիզմը իրեն կապիտալիզմի նորագույն  
ետապ», Ա. տպ. Յերեվան, 1926, Բ. տպ. Յե-  
րեվան, 1934.

53. Վ. Ի. Լենին «Նոր տնտեսական ժաղաքականություն», Յե-  
րեվան, 1926.

54. Քաղաքատնեսության հարցեր. քրեստոմատիա ըստ Լենի-  
նի, իմբ. Շ. Մ. Դույլացկու, Յերեվան, 1929.

55. Վ. Ի. Լենին «Արիեստակցական շարժման մասին», Մոսկա, 1930.

56. Վ. Ի. Լենին ա. Ֆարբերիկաներում ու գործարաններում բան-  
վորներից գանձվող տուգանիների վերաբերյալ  
որենիքի բացարությունը. բ. Գիմնազիական  
տնտեսությունները և ուղղիչ գիմնազիաները.  
գ. Ֆրիդրիխ Ենգելս. դ. Խնչի մասին են մտա-  
գ. Ֆրիդրիխ Ենգելս. ե. Սոցիալ-դեմոկրա-  
ծում մեր մինիստրները. ե. Սոցիալ-դեմոկրա-  
ծուական կուսակցության ծրագրի նախագիծն ու



- բացառությունը. (տպագրված են Լենինի  
«Յերկերի» լիակատար ժողովածույթի Ա. Հատողի  
հայերեն հրատարակության մեջ), Յերեվան,  
1930 (սրանցից «Ֆրիդրիխ Ենգելսը» տպված ե  
նաև իբրև առանձին գրքույկ, Յերեվան, 1931).
57. Վ. Շուլգին «Մարքսի ու Ենգելսի իրենց մանկավարժական  
առույթներում», Յերեվան, 1928.
58. Ֆ. Մերինգ ու Ռ. Լյուիսեմբուրգ «Կարլ Մարքսի «Կապի-  
տալի» համարու շարադրանքը», Յերեվան,  
1924.
59. Կ. Մարքս «Քաղաքատնտեսության ֆինադատության շուր-  
ջը», Յերեվան, 1932 ու վերջապես
60. Կ. Մարքս «Կապիտալ», Ա. հասոր, Յերեվան, 1933:

ՀՀ Ազգային գրադարան



NL0389144

70.075